№ 87 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 25

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 25 № 87

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կօպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄՇԱԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Քոյրս, Մարիամ Առագեան Դաւթեանները և Աննա Առագեան Էջուբեանը իր որդկերանցով ցաւօք սրտի յայտնում են իրանց թանգագին և անմոռանալի եղբօր և մօրեղբօր՝

**ԵԳՕՐ ԱՌԱԳԵԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ**

եղերական մահը, որը տեղի ունեցաւ ապրիլի 20-ին: Հոգեհանգիստը կիրակի և երկուշաբթի, երեկոյեան 7 ժամին: Յուղարկաւորութիւնը երեքշաբթի, ապրիլի 25-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից (Բէբուտովսկի փող. № 35) դէպի Մօղնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

(կ. ե.) 2—2

## Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

խնդրում է բոլոր տնատէրերին անյապաղ ձեռնարկել սալայատակների ուղղելուն և շինելուն, նկուղների, մուտքերի, փոսերի և սանդուխների աստիճանների վերանորոգման, որոնք գտնվում են սալայատակների վրա և որոնք չը համապատասխանելով պարտադիր կանոններին գրաւում են 7 վերշոկից աւելի: Այն բոլոր տնատէրերին, որոնք մի ամսվայ ընթացքում չեն ուղղի պարտադիր կանոնների վերոյիշեալ խախտելը, վարչութիւնը անյապաղ պատասխանատուութեան կենթարկէ, իսկ աշխատանքները կը կատարվեն տնատէրերի հաշւով:

1—1

**ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԱՏՐՈՆ**

Տեղական Դրամատիկ. Ընկերութեան Վարչութիւնը

պէտք է պահէ եկող սեզօնում

(1906—1907)

## ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ. ԽՈՒՄԲ

և հրաւիրում է ցանկացողներին (դերասան, ռեժիսոր, սցենարիուս և յուշարար) իրանց պայմաններով դիմել ընկերութեան նախագահին, պ. Գ. Չուբարին, այս հասցէով՝

Нахичевань на/Дону присяжному поверенному Георгій Ивановичу Чубарову 21 л. д. № 8.

(ե. հ. շ.) (առ.) 3—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի մեծ կարիք. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկատու Զանգեզուրի. Սոկրատ Մելիք-Ադամեանի յիշատակին. Դատախօսութիւններ. Մխական ընտրութիւնները. Քարէ տապրակներից դուրս պրծած աղաղակները. Ցաւալի երևոյթ. Նոր դերակատարներ. Պետական Դումայի շուրջը. Տեղեկութիւններ գաւառից. Հիմնական օրէնքների նոր նախագիծը. Բարենորոգումներ հայ եկեղեցու մէջ. Նամակ Ղրիմից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Մեր նախկին և ապագայ դպրոցները:

## ՄԻ ՄԵԾ ԿԱՐԻՔ

I

Մենք մի քանի յօդուածներով բացատրել էինք, որ որքան էլ ուժեղացնենք նպաստներ ժողովելու գործը, այնուամենայնիւ մենք անկարող կը լինենք հայթայթել այն բոլոր գումարը, որ կարևոր է և անհրաժեշտ աւերված տնտեսութիւնները վերականգնելու համար:

Ուստի մենք հանդէս էինք բերել պետական օգնութեան անհրաժեշտութիւնը: Պետութիւնը կարող էր օգնել գումարներ բաց թողնելով փչացած գիւղացիներին կամ բոլորովին ձրիաբար և կամ իբրև փոխառութիւն:

Յոյս չունենալով, որ պետութիւնը ներկայումս կը տայ գումարներ իբրև նուէր, մենք պնդում էինք այն բանի վրա, որ գոնէ յատկացվէր մի որոշ գումար, իբրև փոխառութիւն, իբրև պարտք արտօնեալ պայմաններով, օրինակ, առանց տոկոսի, կամ չնչին տոկոսով:

II

Գիւղացիները ներկայումս փողի մեծ կարօտութիւն ունեն և իրանք էլ չը գիտեն, թէ որտեղից նրան գտնեն, որպէս զի կարողանան այդ փողով իրանց տները վերանորոգել կամ վերաշինել, իրանց ապրուստը ապահովել, իրանց արտերը ցանել և առհասարակ նորից վերականգնել այն բոլորը, ինչ որ դժոխային մրրիկը այնպիսի դիւական անգթութեամբ քանդել կործանել էր մի քանի օրում:

Այն օգնութիւնները, որոնք սպասվում են նպաստամատոյց յանձնաժողովներից, շատով կարող են սպառվել՝ յամենայն դէպս, նրանք շատ չնչին են համեմատած այն մեծ կարիքի հետ, որ ունեն աւերված գիւղերը իրանց ամենաանհրաժեշտ պէտքերի և կարիքների համար:

III

Ժողովելով և գումարելով այն բոլոր տեղեկութիւնները, որոնք զանազան ժամանակներ մեր ձեռքն են ընկել, մենք եկանք այն եզրակացութեան, որ Երևանի, Գանձակի և մասամբ Թիֆլիսի նահանգները հայ-թուրքական ընդհարումներից կորցրել են մօտ 20 միլիօնի արժէք:

Դա մի այնպիսի մեծ կորուստ է, որը պէտք է սոսկում առաջ բերէ այն բոլոր մարդկանց վրա, որո՛նք գիտեն թէ ինչպիսի ծանր դրութեան մէջ էր մեր երկիրը վերջին տարիներում, մանաւանդ, որ այդ ծանրութեան ամենախոշոր մասը ընկնում է գիւղական դասակարգի վրա:

Իսկ եթէ հաշուի առնենք և Բագուի շրջանի ստացած վնասները և մի քանի ուրիշ կորուստներ, մենք կը տեսնենք որ Անդրկովկասը հայ-թուրքական ընդհարումներից կորցրել է ոչ պակաս քան 100 միլիօն րուբլու վնաս:

IV

Վերադարձնել այն բոլոր վնասները և կորուստները ոչ մի ժամանակ մենք չենք կարող:

Երկիրը կորցրել է շատ բան անվերադառնալի կերպով: Եւ այժմ հարց կարելի է միայն դնել այն բանի մասին թէ ի՞նչպէս անենք, որ վերականգնենք մեր տնտեսութիւնները, վերականգնենք մեր կուլտուրական գործը, որ քայքայվել և չքացել է:

Եթէ Բագուի շրջանը կարողացաւ պետական փոխառութեամբ նորից ձեռնարկել արդիւնագործութեան վերականգման գործին, ինչո՞ւ պետութիւնը չէ մտածում օգնել և այն աշխատաւոր մասսաների համար, որոնք անօգնական դրութեան մէջ են գաւառների ընդարձակ տարածութիւնների վրա և որոնք անկարող են իրանց սեփական ույժերով կրեդիտ բանալ իրանց համար և մեծաքանակ գումարներ ժողովել իբրև նպաստ, պարտք կամ փոխառութիւն:

V

Մենք հաշուի առնելով միայն նուազագոյն պահանջները և աշխատելով կարելին չափ ամենաանհրաժեշտ կարիքները նշանակելու, այնուամենայնիւ եկել ենք այն եզրակացութեան, որ մեր գիւղական աշխատանքին օգնելու համար առնուազն հարկաւոր է երկու միլիօն րուբլի:

Դա նուազագոյն չափն է այն գումարի, որ կարող է մի որ և է ական օգնութիւն հասցնել աղէտաւորներին:

Բոլորովին անտէր և քայքայված դրութեան մէջ են մեր երկրում մօտ 5000 տուն, որոնք կորցրել են ամեն բան և պէտք է նորից շինեն բնակութեան տեղ և սկսեն տնտեսութիւն: Իսկ եթէ հաշուելու լինենք այն բոլոր գիւղացիներին, որոնք ստացել են վնասներ փոքր կամ մեծ չափով, այն ժամանակ այդ թիւը պէտք կը լինի կրկնապատկել:

VI

Այնպիսի գիւղերում, ինչպէս են Գանձակի գաւառի Բադա, Ղազախլու (Գետաբէկ), Ջիվանշիրի գաւառի Սարով Բէգլիւմ, Մարալեան և շրջակայ գիւղերի, Ղազախի գաւառի Կըրզան և Ջիւրըլու գիւղերը, Զանգեզուրի գաւառի Մինքենդ, Ալիղուլիքենդ, Հարար, Խոզնավար, Չէյվա գիւղերը, Արէշի, Շուշու, Ջիբրայիլի, Շարուրի Թշուառացած և մնանկացած գիւղերը պահանջում են, որ իւրաքանչիւր տուն ունենայ գոնէ մի 500 րուբլու օգնութիւն, որ կարողանայ և տուն շինել և լծկան եզներ և կով առնել և երկրագործական ու տնային իրեր գնել և ապրուստի միջոց հայթայթել:

Իսկ եթէ լուրջ օգնութիւն չի լինիլ, անկասկած մենք շատով անկարող կը լինենք վերականգնել աւերված գիւղերը և տարիներ շարունակ ստիպված կը լինենք հալումաշ լինել մեր այս դժոխային տարվայ հարուածներից:

Հայ-Թուրքական խորհրդակցութեան մէջ այդ հարցը դրված է և ընթացք է ստացել: Բայց արդեօք կառավարութիւնը շուտ կը լուծէ այդ խնդիրը:

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովը խնդրել էր Շուշու առաջնորդ Աշոտ եպիսկոպոսից տեղեկութիւններ հաղորդել Խաչէնի և Վարանդայի վնասված գիւղերի ժողովրդի վիճակի մասին: Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է ապրիլի 23-ին, որ տեղեկութիւններ Խաչէնի մասին արդէն հաւաքվել են, իսկ միւս տեղերի մասին հաւաքվում են: Առ այժմ պէտք է օգնութեան համար 20,000 րուբլի:

—

Ղազախի գաւառ, Շամշադինի վիճակ, ապրիլի 16-ի:

Գեներալ-մայոր Լեվիցկին՝ համաձայն իր վճռի, այսօր Շամշադինի վիճակի մի քանի գիւղերից՝ այն է. Ներքին-Կարմիր Աղբիւր, Թովուզ, Բերդ, Նաւուր, Վերին-Կարմիր աղբիւր, Նորաշէն և Մովսէս գիւղերից ստացաւ վեց հազար րուբլի, որից 5000-ը տրվելու է այն երկու սպանված կօզակների որբերին, որոնց սպանութեան համար մենք մեղաւոր ենք ճանաչված մեզ անյայտ հիմունքներով, իսկ 1000-ը յօգուտ Գանձարանի, իբրև տուգանք մեր չարագործութեան համար: Կօզակների այդ սպանութիւնը, որ կատարվել է հայ-Թուրքական ընդհարման միջոցին երկու ախոյեան ազգերի միջև, մեզ միանգամայն անյայտ է մնում հաստատել թէ ո՛ր կողմից եղաւ յանցաւորը: Այդ սաստիկ և ույժից վեր պահանջը 7-ը աղքատ գիւղերից, համարեա ուժասպառ արաւ հասարակութեանը, որովհետև այս երրորդ պահանջն է տէրութեան կողմից: Ժողովուրդը փող չունենալով վճարել, դիմեց փոխառութեան, որով վաղուց ի վեր էր քանդված աղքատ գիւղացու տունը: Այս մի անգամը ևս վերջին կարողութիւնը, հացի համար պահած կօպէկները և ճուտերը թեսկանով ծախելով՝ վճարեց և ազատվեց կառավարութեան սպառնալիքներից:

Տեսնենք եթէ միւս անգամ կրկնվի այսպիսի մի պահանջ, ո՞րտեղից պէտք է տան:

Յովսէփ Խաչատրեան

—

Երէկ մեր խմբագրատուն մտան Ղազախի գաւառի Շամշադինի Մովսէս գիւղացի Շաքար Սարգիսեանը և Յովսէփ Խաչատրեանը, որ եկել էին ապրիլի 25-ին, ու յայտնեցին հետևեալը.

1) Ապրիլի 21-ին Չինարի հայ գիւղից՝ հարևան Թուրք գիւղից 5 հոգի զինված՝ օրը ցերեկով գալիս քշում—տանում են մի եզ: Աւար է ընկնում գիւղում և 4 հոգի հետապնդում են Թուրքերին:

Թուրքերը, նկատելով մօտեցող հայերին, կրակ են բաց անում նրանց վրա, նախապէս թագցնելով եզը:

Սկսվում է փոխադարձ հրացանաձգութիւն, որից յետոյ հայերը բռնում են 2 Թուրք և 4 եզ ու տանում իրանց գիւղը: Բռնված Թուրքերի խնդրանօք հայերը մէկին արձակում են, որը վերադառնալով իրանց գիւղը, բերում է հայի եզը և յանձնում տիրոջը, իսկ հայերն էլ ազատ արձակում են Թուրքերին իրանց եզներով հանդերձ:

2) Նոյն օրը, ապրիլի 21-ին, Մովսէս գիւղացի երկու անզէն հայեր, Թօուզ կայարանից իրանց տուն վերադառնալիս, ճանապարհին, Օքսուզլու Թուրք գիւղի հանդերով անցնելու ժամանակ, տեղացի մի քանի Թուրքեր հետապնդում են նրանց և աշխատում բռնել, բայց հայերը փախչելով ազատվում են: Հայերը յարձակվողներից մէկին ճանաչել են. Օքսուզլուեցի Մամադ-Հասան Բայրամ-Ալի-օղլուն:

3) Ապրիլի 22-ին դարձեալ մի և նոյն Օքսուզլու գիւղի մօտով վերադառնում է Թօուզ կայարանից Ղըրզի գիւղացի մի հայ մարդ: Օքսուզլուի հանդերում բանող Թուրքերը սկսում են նայածել նրան բռնելու նպատակով: Եւ զոհը արդէն ծուղակի մէջ է լինում, երբ պատահաբար հակառակ կողմից վերադառնում է պրիստաւի վրացի ստրաժնիկը և նկատելով աղմուկն ու հալածանքը քշում է ձին դէպի նրանց և հասկանալով բանի էութիւնը, ուզում է արգելք լինել Թուրքերին ու ազատել հային:

Թուրքերը գայրացած ստրաժնիկի միջամտութիւնից, բահերով ու փայտերով յարձակվում են վրա, չար դիտաւորութեամբ: Ստրաժնիկը հարկադրվում է զէնքի օգնութեան դիմել պաշտպանվելու համար:

Թուրքերը թողնում են և այս ու այն կողմը փախչում: Իսկ ստրաժնիկը վերցնելով հայ մարդուն իր հետ յետ է դառնում պրիստաւի մօտ:

Այս դէպքի հեղինակն էլ եղել է մի և նոյն Մամադ-Հասան Բայրամ-Ալի-օղլին: Թէ այս և թէ նախորդ դէպքի համար պրիստաւը հեռագրել է գաւառապետին:

Վերջինից հրաման ստանալով կալանաւորելու յիշեալ Մամադ-Հասանին, պրիստաւը անձամբ գնում է Օքսուզլու գիւղը, բայց Մամադ-Հասանը արդէն անյայտացած է լինում, այնպէս որ փախչողին ձեռք ձգելու նպատակով պրիստաւը կալանաւորում է նրա կնոջը և եղբօրը:

Ահա մեր հարևանների խաղաղասիրական ձգտումները այդպիսի թշնամական քայլերով են առայժմ արտայայտվում, որոնք դժբաղդաբար պէտք է խախտեն մեր վստահութիւնը և հաւատը:

—

Դիլիջան, ապրիլի 22-ին

Ամսիս 13-ին գաւառամասի պրիստաւի պահանջով Քարվանսարայում հայ-Թրքական ժողովի ժամանակ առաջարկվեց ընտրել գաւառական և գաւառամասնական կոմիսիայի անդամներ, քուչի ժամանակ հայ-Թուրքական տարաձայնութիւնները լուծելու համար. առաջինի համար մի-մի հայ և Թուրք, երկրորդի համար երկու հայ և երկու Թուրք: Առաջինի համար առաջարկվեց ի միջի այլոց Դիլիջանի տանուտէր Ստ. Դաւթեան, որ հրաժարվեց, յետոյ ընտրվեց Դիլիջանի գիւղական դատաւոր Ա. Անանեան. ընտրութիւնը աջող կարելի է համարել: Պրիստաւի մօտ կազմվելիք կոմիսիայի հայ անդամներ ընտրվեցին Քարվանսարեցի Գ. Մարկոսեան և Սեռի գիւղացի Արտեմ...:

Արհուս

—

Մեզ հաղորդում են հետևեալը.

Բօրչալուի գաւառում վարչութիւնը սկսել է պահանջել այն վնասները, որ տեղի էին ունեցել հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ: Գաւառապետը կարգադրութիւններ է անում, որ տրված հրամանները ճշտիւ կատարվեն:

Այսպէս, օրինակ, աջողվել է Թուրքերից վերցնել 170 գլուխ ապրանք և յանձնել Կ. Մելիք-Բախտամեանին:

Հրամայված է Թուրքերին, որ յանձնեն պանրագործ Մատթէոսեանին 300 գլուխ ապրանք:

Տօնանեանց և Յակոբեանց խանութպաններին Թուրքերը պէտք է վճարեն 5000-ական րուբլի մի խումբ գիւղերից:

Նոյն կարգադրութիւնը արված է Կուչէնքախի ապակու գործարանի շրջանում եղած վնասների վերաբերմամբ: Այդտեղ, օրինակ, շահնազարցի մի խանութպան կորցրել է 12,000 րուբլու արժողութեան գոյք, որի փոխարէնը պէտք է տուգանք տան կողոպտողները:

—

Գանձակ ապրիլի 22-ին:

Բաղեսի գաղթականներից մի քանի անձ այսօր ներկայացան քաղաքացիական նահանգապետ Կալաչևին իմանալու՝ Բադաձոր վերադառնալու և վերաշինելու ժամանակ երաշխաւորութեան մասին: Նահանգապետն իր կողմից ոչ մի երաշխաւորութիւն յանձն չառնելով՝ թողել է վերադառնալու կամ մնալու հարցը գիւղացիների ազատ կամքին ու ընտրութեան:

Նոյն նպատակով երէկ դիմում են աբել գեներալ-նահանգապետին Ղարադաղլու հայ գիւղացիք: Նահանգապետը խորհուրդ է տուել, որ գիւղացիք դիմեն գաւառապետ Առալեանի աջակցութեանը—Թուրք շրջակայ գիւղերից նպաստներ հաւաքելու հայերի օգտին:

Այս գիշեր Թրքաց Թաղում մօտ 10 անգամ հրացանի տրաքոցի ձայներ լսվեցին:

Տրաքոցի պատճառները զանազան տեսակ են բացատրում. ոմանք ասում են, որ ընդհարում եղել է Թուրքերի և գիշերային պահակ զինուորների մէջ, իսկ ոմանք ասում են, որ մի քանի զինված Թուրքեր մտել են մի հարուստ Թուրքի տուն, աւազակ Նադիրի անունից 500 ր. փող պահանջելու և մերժում ստանալով՝ Թուրքերը կրակել են: Հաւանական է համարվում վերջին ենթադրութիւնը. բայց անհաւանական է համարվում, որ Նադիրն լինի մարդ ուղարկած...

Ռուսները, որ գրեթէ խառն են ապրում Թուրքերի հետ, առհասարակ խուսափում են Թրքաց Թաղում տեղի ունեցած լուրերի մասին տեղեկութիւն տալու հայերին...

Եթէ Թուրքաց Թերթերում հրատարակած լուրերն ուղիղ լինէին—որ 4 հայ են Գանձակում Թուրքացել՝ մեզ համար կարիք չէր լինի այսպիսի լուրերը ենթադրութեամբ հաղորդելու, հայը երբ իր բերան—բացութիւնից ձեռք չէր քաշել, հիմա ամեն բան հաստատ լսած կը լինէին...

Թուրքաց Թերթերի հաղորդած լուրը հայերի Թուրքանալու մասին Թղթակցի երևակայութեան արդիւնք է միայն: Կրօնափոխութեան ոչ մի դէպք չէ եղել, բացի յայտնի երեք Թրքուհիներից, որոնք, չը նայած հայերի յորդորանքին՝ վերադառնալու Թուրքերի մօտ—նրանք բաց է ի բաց մերժեցին:

Այս հասարակ դէպքը, ինչպէս երևում է, շատ վատ է ազդել մոլեռանդ Թուրքերի շրջանում. Նրանց համար հաճելի է այդպիսի սուտ լուրերի հրատարակումը:

Երէկ մի յանձնաժողով ուղևորվեց հայ և ռուս պաշտօնեաներից բաղկացած, Թարգմանչաց վանքի և Զարեքայ վանքի անտառները վերադարձնելու եկեղեցական վարչութեան:

—

Շինուհայր գիւղ (Զանգեզուրի գաւառ,) ապրիլի 18-ին.

Մեր գիւղացիք, որոնք ունէին ստանալիք գումար Բագուից գողացված իրերի համար, Թուրք-հայկական ընդհարումների ժամանակից, ուղարկել էին հաւատարմագրեր իւրաքանչիւրն իր բարեկամի, ծանօթի վրա, որպէսզի ստանան հասանելիք գումարը և ուղարկեն, քայքայման և պակասութեան ճանկերում տառապող գիւղացուն: Փողի փոխանակ ստանում են հաւատարմագրերը նամակի հետ, որի մէջ գրած է լինում՝ թէ ձեզ հասանելիք գումարը ստացված է:

Ո՞վ է ստացել և ի՞նչպէս, յայտնի չէ: Գիւղացին, որ վաղուց արդէն որոշել էր ստանալիքի մսխելու տեղը, այժմ զզվում է մարդկանց ստոր արարքները տեսնելով: Հաւատարմագրերը վաւերացրած են լինում առհասարակ տանուտէրերի կնիքով, երբեմն մի քանի ստորագրութիւններով:

Ամօթ, բի՛ւր ամօթ, այդ անիրաւ և անպատկառ վարվողներին...:

Հարկաւոր են միջոցներ ձեռք առնել՝ այդ անիրաւներին գտնելու և պատժելու:

Ամսիս 16-ին երեկոյեան դէմ անձրև եկաւ, որին յաջորդեց սարսափելի և չը տեսնված կարկուտ, որը ջարդեց նորածիլ արտերը և ծառերը ծաղկաթափ արեց: Մարդկանց հասցրած պատուհասին յաջորդեց երկնայինը: Մթերքները թանգ են այժմ ևս: Ցորենը 1 ր. 60 կօպ., այսպէս և բոլորը: Այստեղ գիւղացու դրութիւնը վատթար է, և ոչ մի յուսոյ աստղ չէ տեսնվում:

Ս. Բալեան

—

Գօրիս, ապրիլի 13-ին.

Անծայր աղքատութեան հետևում են ուրիշ Թշուառութիւններ. գիւղերում տարածված է հազ, կարմրուկ, պատահում ենք և ծաղիկ և այլն: Առողջապահական ոչ մի յարմարութիւն չը կայ. գիւղացիք համարեա բացօթեայ են գիշերում: Յանձնաժողովից ստացած մի-մի կապերտն էլ դռների տեղ են գործ ածում, որովհետև բարի Թուրքերը դռներ անգամ չեն թողել: Գիւղում շան հաչոց և աքաղաղի սովորական ձայն էլ չէք լսի գիշերը կամ ցերեկը: Թուրքերը աքաղաղի և շների նեղութիւնները իրանց վրա են վերցրել և դրա համար տարել են: Քարերն են աղաղակում մարդկանց տեղ, իսկ հասարակութիւնը չէ լսում: Վաղուց մարդիկ դադարել են նայելու իրանց քթի տակ գտնվող կենդանի-մեռելներին...:

Գր. Գ.

—

Դարալագեազ, ապրիլի 18-ին

Ամսիս 8-ին, Թուրքական Դաշալթի գիւղում, Աղամալի անունով մի Թուրքի տան մէջ, անզգուշութիւնից կրակ է ընկնում մի մեծ տոպրակ վառօդի վրա, որը պայթելով օդն է թռցնում տան առաստաղը և քանդում է տան պատերը: Տան մէջ եղածներից, տեղնուտեղը մեռնում են 2 հոգի, մի կին և մի տղամարդ, իսկ 4 հոգի մահացու վէրքեր են ստանում: Եթէ այդպիսի բան պատահէր մի որ և իցէ հայ գիւղում, հօ գիւղը կը ռմբակոծէին:

Դառնանք մեր տեղեկութիւններին:

Բաշնորաշէն են կանչված մի քանի զօյթուրցի հայեր: Այս վերջինները անցեալ տարի մի բողոք էին ներկայացրել բարձր իշխանութեան գաւառապետի օգնական Սկիբինսկու կատարած սխրագործութիւնների դէմ: Այդ բանի առիթով նշանակվել է քննութիւն, որի համար էլ կանչված են զօյթուրցիք: Ի միջի այլոց, նրանք բողոքել էին այն բանի դէմ, որ հոկտեմբերին Սկիբինսկին հանդից քշեց զօյթուրցիների նախիրը և ոչխարի հօտը: Տաւարը և ոչխարը Բաշնորաշէնում ծախվեց Թուրքերին ամենաչնչին գնով և ստացված փողը գնաց ի հաշիւ այն տուգանքի, որ հայերը պէտք է վճարէին Հօրս Թուրքական գիւղի վրա յարձակվելու համար:

Գարուն է. Նոր-Բայազէդի գաւառ «Այրիջա» կոչվող եայլաղատեղի ճանապարհը բացվում է. այսուհետև այդ ճանապարհով միշտ երթևեկներ կը լինեն, մանաւանդ դարալագեազցիներից, որոնք գնում են Նոր-Բայազէդի գաւառը՝ ցորենի և զանազան տնային իրերի համար: Որպէս զի անցեալ տարվայ պէս խաղաղ ճանապարհորդները չենթարկվեն Թուրքերի յարձակմանը, արդեօք Նոր-Բայազէդի պ. գաւառապետը հնարաւորութիւն չի՞ ունենայ նշանակելու Այրիջայի Թուրքական Խարթլուդ գիւղում մի պահակ, գոնէ մի 4 կամ 5 ստրաժնիկներից բաղկացած:

Ամսիս 5-ին Մալիշկա եկաւ մի օֆիցեր, 35 զինուորներով: 2 օր մնալով Մալիշկա և լաւ հիւրասիրվելով մալիշկեցիներից, 3-րդ օրը նա շնորհակալութեամբ մեկնեց միւս գիւղերը:

Անցեալ անգամ գրել էի, որ Մալիշկա գիւղում կայ մի տեսակ հիւանդութիւն, որը հաւանական է ժանտախտ լինի. բարեբախտաբար, մեր ենթադրութիւնը չը ճշտվեց: Անցեալներում Մալիշկա եկան գաւառական բժիշկ պ. Գիլները և գիւղական բժիշկ պ. Սաֆիեվը: Այս վերջինները գտան, որ, ճիշտ է, գիւղում կայ հիւանդութիւն, բայց ժանտախտ չէ և երկիւղալի էլ հիւանդութիւն չէ, միայն հարկաւոր է խուսափել գիւղական դալլաքներից:

Հաստատվեց նաև, որ կայ «рожа» կոչված հիւանդութիւնը: Շատ զոհեր է տանում մի քանի գիւղերում «կապոյտ հազը» երեխաներից:

Արփաչայը սկսել է վարարել, բայց կանգուն է մեր նախկին պրիստաւ պ. Դումբաձէի ջանքերով կառուցած կամուրջը, առանց որի յարաբերութիւնը կարվում էր շատ գիւղերի մէջ:

Մի անգամ ևս շնորհակալութիւն «մեր» Դումբաձէին: Երանի ձեզ աշտարակեցիք, ունէք Դումբաձէի պէս պրիստաւ և շուտով կունենաք Գիլների պէս բժիշկ:

Վ. Դովլաթեան

—

Շուշուց հեռագրում են մեզ ապրիլի 23-ին.

«Հայոց սեմինարիայի մանկավարժական խորհուրդը ապրիլի 22-ին, ձայների մեծամասնութեամբ որոշեց չը մասնակցել Էջմիածնում մայիսի 7-ին կայանալի ուսուցչական համագումարին գտնելով, որ նա գումարվում է հակաժողովրդական սկզբունքներով»: Մի խումբ ուսուցիչներ:

—

Լօնդօն, 22 ապրիլի

Բրիտանական կառավարութիւնը ուլտիմատումի բնաւորութիւն կրող մի բողոքագիր է ներկայացրել Բ. Դրան: Այդ բողոքագրով Անգլիան պահանջում է, որ Բ. Դուռը եգիպտական երկրից հեռացնէ Թիւրքաց զօրքերը: Ֆրանսիական և ռուսաց դեսպանները պաշտպանում են բրիտանական դեսպանին: Ուլտիմատումի ժամանակամիջոցը հաշուած է 10 օր:

(Հեռ. Գործ.)

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Ապրիլի 12-ին

Թշուառ մինքենդցիներին Մինքենդ փոխադրելու համար, կառավարութիւնը մի քանի անգամ հրամաններ էր տուել, սակայն մինչև այժմ և ոչ մէկն էլ իր ժամանակին չէ կատարվել: Եւ խեղճերը այս կամ այն գիւղում վիզները ծռած, տնից տեղից աւարա դառած, իզուր օրեր են վատնում, այսպիսի աշխատանքի օրերում:

Մինչև ե՞րբ:

Մինչև ե՞րբ սպասեն, որ կառավարութեան տուած հրամանի համաձայն, գիւղերից հաւաքված հայ ընտանիքաւորների հետ միասին (300 տուն է որոշված) նրանք էլ տեղափոխվեն Մինքենդ, ապրեն բնիկ յարկի տակ, և դադար առնեն այս կամ այն գիւղում պտըտելուց:

Ինչպէս մանկան խանձարուր, կարիքը շըրջապատած է ամեն մի մինքենդցի տղամարդի շուրջը. ամեն քայլ իր կարիքն ունի: Ի նկատի ունենալով անտէր և անսերմ մինքենդցիների դրութիւնը, Զանգեզուրի Նպաստամատոյց յանձնաժողովը, նախագահ արժ. Ն. վարդ. Մելիք-Թանգեանի միջոցով իւրաքանչիւր ընտանիքի ամեն մի շնչին տուել է 7 ր. որից 4 ր. սերմացու, իսկ 3 ր. եզ գնելու

Ազատված մինքէնդցիք 503 հոգի են, որոնց համար արդէն սերմացու է գնված Սիսիանից:

Աղքատ. յանձնաժողովի տուած նպաստը կօգնէ վար ու ցանքը առաջ գնալուն, իսկ նրանց տնտեսական կեանքը շատ պակաս և կարիքաւոր կողմեր ունի: Այդ իսկ պատճառով նրանք ստիպվեցան կառավարութիւնից անգամ նպաստ խնդրելու, որին դեռ սպասում և սպասում են:

Մինքէնդցիների համար գիւղ տեղափոխվելը ստիպողական չէ, ուստի նրանց մէջ կան ընտանիքներ, որոնք մահն աւելի են գերադասում, քան նորից Մինքէնդ դառնալը: Եւ այդ ցոյց է տալիս, թէ թուրքական բարբարոսութիւնները և կոտորումները որքան մեծ չափեր են ունեցել, որից հայերը դեռ խորշում, քաշվում և դողում, սոսկում են:

Մինքէնդ պէտք է տեղափոխվեն նախ աշխատաւոր մարդիկ, որոնք կը վարեն, կը ցանեն արտերը և երբ թուրքերը սար կը բարձրանան և հանգիստ կերպով կը դառնան իրանց տեղերը, այն ժամանակ միայն կը տեղափոխվեն մինքէնդցիների ընտանիքները:

Այն օրից, երբ կառավարութիւնը որոշել է տեղափոխել մինքէնդցիներին իրանց տեղը, հայերն էլ մի քանի պահանջներ են արել, որոնք մինչև այժմ կարօտ են պատասխանի:

Նրանք խնդրել են Մինքէնդից հեռացնելու այլ տեղ 3 տուն բնիկ թուրքեր, որոնք եղել են կոտորածի պարագլուխները: 9 տ. մոլլաանճատլուեցիների և 35 տ. բայրնդուրեցիների: Սրանք բոլորն էլ ճանաչված են, որպէս անհանգիստ և խռովարար տարր, որոնց ներկայութեամբ հայերը խաղաղ կեանք չեն կարող ունենալ Մինքէնդում:

Թուրքերի ձեռքով քար ու քանդ արած տների համար, հայերի տասից աւելի տուած խնդիրքը յարգվեց ի վերջոյ և պ. գաւառապետը պատուիրել էր թուրքերին հայերի տները որքան հնարաւոր է նորոգել: Նորոգելու փոխարէն աւելի փչացել են: Քանդած են մարագներ, գոմեր, սրահներ, տներ, գարբաններ և փայտեղէն բոլոր ծածքը վառած, փչացրած են թուրքերը.

Մի այլ և կարևոր հարց է կեանքի ապահովութեան հարցը: Որքան դժուար է և ծանր 30 վ. հայկական գիւղերից հեռու Մինքէնդը թողնել Հաջի սամլուի սուղան կրողների կողքին անզէն, (հինգ հարուածաւորների մասին է խօսքը) անսուր, անզանակ: Այդ առիթով դիմել են ժամանակաւոր զինուորական նահանգապետ Ալյխանին զէնք կրելու թոյլտուութիւն խնդրելով և օրինակ են բերել մեր գաւառի մալականներին, որոնք ազատ համարձակ զէնք են կրում: Նահանգապետը խոստացել է դիմել այդ մասին Փոխարքային:

Զանգեզուր եկան պրինց Նապոլէօն, Տակայշվիլի, փոխ գնդապետ Վեվէրն, նահանգապետ Ալյխան, որոնց բոլորին խնդիրք են տուած Մինքէնդի ներկայացուցչի պ. Ի. Բուշախնեանցի ձեռքով և բերանացի բողոք է արտասանել պարոնը գաւառապետ Աւալեանի արած բոլոր գործողութիւնների համար, որոնցով նա անձեռնհաս ձեւացրեց իրան մինքէնդցիներին օգնելու: Սրանց մէջ մարդասէրն և ազնիւ պաշտօնավարը պրինց Նապոլէօնն էր, որ գիտեց ամէն ինչ և մինչև իսկ լաց եղաւ: Խնդիրքներն անլուր են:

Բոլոր կալանաւորված թուրքերը ազատված են բանտից և իրանց տեղերը ուղարկած:

Հեռաւոր, դժբախտ Զանգեզուր, ի՞նչ է սպասում քեզ այս եկող մայիսին. լա՞ւ կը լինեն քո սար ու ձոր, թէ՞ կալի դաշտ: Ապրենք, կը տեսնենք:

Սազանդարեան

## ՍՈԿՐԱՏ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Երէկ, երկուշաբթի, ապրիլի 25-ին տեղի ունեցաւ Սոկրատ Մելիք-Ադամեանի թաղումը: Եկեղեցում խռնվել էր յարգողների մեծ բազմութիւն: Եղիշէ վարդապետ Մուրադեան խօսեց մի ճառ և ցոյց տուեց հանգուցեալի արժանաւորութիւնները և նրա գործունէութեան հասարակական նշանակութիւնը:

Այնուհետև մարմինը տեղափոխվեց Խօջիվանքի գերեզմանատունը: Դագաղի վրայ դրված էին բազմաթիւ պսակներ թէ մասնաւոր անձերից և թէ հասարակական համախմբութիւնների կողմից:

Գերեզմանատանը դամբանականներ խօսեցին մի քանի անձեր:

Ա. Քալանթար ասաց հետևալը. Սոկրատը գործում էր այն ժամանակ, երբ հրապարակի վրա շատ քիչ էին հասարակական գործողները և երբ պահանջ կար թէ առանձին եռանդ գործողներից և թէ հեղինակաւոր գործ նրանցից: Պէտք էր համառ կերպով և որոշ քաջութեամբ պաշտպանել մի շարք դատեր և նա պաշտպանեց: Այդտեղ պահանջվում էին մասնագէտի համառութիւն ու լրջութիւն և քաղաքացու եռանդ ու արիութիւն: Թէ որպիսի հոգեկան բաւականութիւն էր ստանում, երբ նրան աջողվում էր իր պաշտպանած դատերով ապատակել այն բռնութիւնը, որ խլել էր հայերից դպրոցական և միւս կալուածքները, այդ մասնաւորապէս յայտնի է ինձ: Նա, որ չափազանց համեստ էր ամէն մի բանում, աշխատում էր այդ դէպքում եռկոյն յայտնի կացուցանել դատի աջող ելքի մասին հայ հասարակութեան և հրատարակել լրագրում ամէնքի գիտութեան համար: Դէպի գործը ունեցած անկեղծ սէրը ու եռանդը գրաւեցին դէպի նա մեր հասարակութեան համակրութիւնը, որը մի առանձին վստահութեամբ վերաբերվում էր դէպի նա:

Զաքչեվսկի խօսեց Սոկրատի մասին, իբրև լաւագոյն աւանդութիւնների պաշտպանի, լաւ հայեացքների տէր մի համակրելի անձնաւորութեան մասին, որը սփռում էր իր ծանօթների շրջանում հաւատ դէպի մարդիկ:

Տ. Յովհաննիսեանը ասաց, որ Մելիք-Ադամեանը իբրև փաստաբան յարգված էր ոչ միայն հայ, այլ և վրացի, ռուս, հրէայ և ուրիշ բոլոր իրաւաբանների շրջանում և կարող էր պատիւ բերել ամէն մի ազգի իրաւաբանների կորպորացիային: Նրա մէջ մասնագիտութիւնը միացած հասարակական զգացմունքի հետ, արդիւնաբերեցին գործողի մի տիպ, որը պէտք է օրինակ ծառայէ և միւսների համար:

Ն. Թոփչեան յայտնեց, որ նա կաւելացնէ իր կողմից թէ Սոկրատը հասկացաւ, որ բաւական չէ սուգ անել ու լալ ազգային թշուառութիւնների ժամանակ, այլ պէտք է գործել և առաջ տանել բոլոր այն տարրերին, որոնք կարող են բողոքի ոյժը զօրացնել ժողովրդի մէջ:

Ա. Խատիսեան, յիշելով այն բազմաթիւ երեկոները, որ Սոկրատը իր ընկերներով նուիրել էր մեր վերջին տարիների ծանր աղէտներին, ցանկութիւն յայտնեց, որ մատաղ սերունդը օրինակ վերցնի նրանից և այդպիսով աւելացնելով գործող ոյժերի թիւը սփոփանք տայ տառապող ժողովրդին:

Կաճկաճեան խօսեց Սոկրատի միջնորդ, համախմբող ընդունակութեան վրա և նրա ցանկութեան մասին՝ տեսնել մարդկանց ազնիւ և շիտակ գործունէութեան ճանապարհի վրա:

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կիրակի, ապրիլի 23-ին, Հաւլաբարի Թատրոնում տեղի ունեցան պ. պ. Հ. Առաքելեանի և Ալ. Խատիսեանի դասախօսութիւնները Պետական Դումայի ընտրութիւնների և «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան մասին: Նախագահում էր պ. Ալ. Քալանթար:

Չը նայելով անձրևոտ եղանակին, թատրոնը լցվել էր ունկնդիրների խուռն բազմութեամբ (մօտ 300 տոմսակ էր ծախվել):

Հ. Առաքելեանի դասախօսութիւնը տևեց մօտ 1¼ ժամ: Նա նպատակ էր դրել իրան ծանօթացնել Հաւլաբարի հայ ժողովուրդը այն դրութեան հետ, որ ստեղծվել է հոկտ. 17-ի մանիֆեստից յետոյ, զանազան քաղաքական կուսակցութիւնների և «ժողովրդական ազատութեան» ծրագիրների հետ և ցոյց տալ թէ անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդը յարէ վերջին կուսակցութեան և մասնակցէ Պետական Դումայի ընտրութիւններին: Դասախօսը մանրամասն կերպով բացատրեց, թէ ի՞նչ է կամենում «ժողովրդական ազատութեան» կուսակցութիւնը և յայտնեց, որ այդ կուսակցութեան ծրագիրը լիովին գոհացում է տալիս այն պահանջներին և իղձերին, որ դրեց և արտայայտեց անցեալ տարի ապրիլին Թիֆլիսում գումարված հայկական համագումարը, իբրև հայ ժողովրդի պահանջ:

Ապա Խատիսեան խօսեց կուսակցութեան տակտիկայի մասին թէ առաջիկայ Պետական Դուման պէտք է նկատել իբրև բողոքի մի տեսակ, մի օրգան և այդ պատճառով մասնակցելով ընտրութիւններին, մենք մեր պատգամաւորներին պէտք է ուղարկենք իրանց ձայնը միացնելու այդ մեծ բողոքին:

Այդ երկու դասախօսութիւնների առիթով տեղի ունեցան սուր և աշխոյժ վիճաբանութիւններ զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչների կողմից: Վիճաբանութիւնները չաւարտվեցին և դասախօսները հնարաւորութիւն չունեցան պատասխանել իրանց օպպօնէնտներին ժամանակի ուշ լինելու պատճառով և յայտարարվեց, որ շարունակութիւնը կը լինի յաջորդ կիրակի, ապրիլի 30-ին:

## ԾԽԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Ապրիլի 23-ին, կիրակի, Թիֆլիսի եկեղեցիներում կայացան ծխական ժողովներ ընտրելու 2 պատգամաւորներ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան և մի պատգամաւոր Թիֆլիսի նահանգապետի մօտ հաստատվելի հայ-թուրքական խորհրդակցութեան հայ անդամների ընտրութեան համար: Մանրամասն ցուցակը բոլոր ընտրվածների մենք առանձին կը տանք: Առ այժմ տեղեկութիւններ կը հաղորդենք մի քանի ծխական ժողովների և ընտրութիւնների մասին: Մենք արդէն յայտնել ենք, որ զանազան համախմբութիւնների կողմից թեկնածուների զանազան ցուցակներ էին տարածվել: Այդ ցուցակները կազմված չէին գաղափարական որ և է սկզբունքի հիմունքով, ուստի և պատգամաւորները ընտրվել են ոչ ամբողջովին մի կուսակցութիւնից:

Վանքի եկեղեցում թեկնածուներ առաջարկվել են պ. պ. Ա. Բաբեան, Տ. Յովհաննիսեան, Ալ. Խատիսեան, Մուշայիծէ, Լ. Տիգրանեան և ընտրվել են ձայների առաւելութեամբ—պ. պ. Տ. Յովհաննիսեան և Լ. Տիգրանեան:

Քամոյենց եկեղեցում թեկնածուներ առաջարկվել են—պ. պ. Ալ. Մելիք-Ազարեան, Գ. Աղայեան, Գ. Խաժակ, Աւ. Սահակեան, Ս. Զաւարեան, և ընտրվել են—պ. պ. Գ. Աղայեան և Գ. Խաժակ, իսկ կանդիդատներ՝ Աւ. Սահակեան և Ալ. Մելիք-Ազարեան:

Մողնու եկեղեցում, ուր բացի ընտրութիւններից, ծխական ժողովը կոչված էր քննելու և բաւական կարևոր հարցեր—ծխական տուրք սահմանելու, Գայանեան դպրոցի շինութեան—եղաւ բազմամարդ ժողով: Ներկայ էին 106 հոգի, բայց ցուցակները ստուգվելիս, յայտնվեց, որ 6 հոգի իրաւունք չունէին մասնակցելու, մտցրված չէին ծխական ցուցակի մէջ: Ընդհանուր ժողովի նախագահի պաշտօնի համար առաջարկվեցին պ. պ. Հ. Առաքելեան և Ս. Լիսիցեան: Սակայն առաջինը հրաժարվելով առաջարկվեց պ. Պետրոս Քալանթարեան, որը նոյնպէս հրաժարվեց և նախագահ ընտրվեց միակ կանդիդատ պ. Ս. Լիսիցեան:

Ժողովը ամենից առաջ կատարեց ընտրութիւնը այն պատգամաւորի, որ պէտք է մասնակցէ Թուրք-հայկական խորհրդակցութեան ընտրողական ժողովին: Ընտրվեց պատգամաւոր պ. Հ. Առաքելեան:

Նախ քան ընտրութիւններին անցնելը, քարտուղար ընտրվեց պ. Ս. Շխեան, որ առաջարկեց որոշել, թէ ներկայ ծխական ժողովը վճիռ կայացնում է, որ այսուհետև ընտրութիւնները կատարվեն չորս-աստիճանեան ֆօրմուլայով, այն է ծխականները ընտրեն հոգաբարձուներին գաղտնի, հաւասար, ուղղակի և ընդհանուր քուէարկութեամբ, որ կանայք էլ ձայն տալու իրաւունք ունենան և հասակը ամէնքի համար որոշվի 20 տարեկան: Այդ առաջարկը մեծ առարկութիւնների հանդիպեց, որոնց կարևորներն այն էին, որ 1) օրակարգի մէջ չը կայ այդպիսի խնդիր, 2) այդպիսի լուրջ խնդիրը պէտք է յատուկ ժողովի մէջ քննվի: Հ. Առաքելեան առաջարկեց յիշատակել միայն արձանագրութեան մէջ, թէ ժողովը ցանկութիւն յայտնեց այդ մասին, բայց այդ բանաձեւն էլ հերքվեց: Ապա գաղտնի քուէարկութեամբ ժողովը ընտրեց 2 պատգամաւոր և 2 կանդիդատ: Թեկնածուներ առաջարկված էին պ. պ. Եփրեմ Ծատուրեան, պ. Քալանթար, Ս. Լիսիցեան, բժ. Ս. Թաղէոսեան, Ն. Մատինեան, Թ. Յովհաննիսեան և Ն. Տէր-Ղեւոնդեան: Ընտրվեցին պատգամաւորներ—պ. պ. Ս. Լիսիցեան, բժ. Տ. Թաղէոսեան և կանդիդատներ—պ. պ. Ս. Շխեան և պ. Քալանթարեան:

Միւս հարցերի քննութիւնը, ժամանակի ուշ լինելու պատճառով, յետաձգվեց:

Մէյդանի ս. Գէորգ եկեղեցում պատգամաւոր ընտրվել են—պ. պ. Յովսէփ Ամիրխանեան և Ն. Թոփչեան: Կանդիդատներ—պ. պ. Ա. Աբեղեան և Շահինեան:

Մի քանի եկեղեցիներում Թուրք-հայկական խորհրդակցութեան համար պատգամաւորների ընտրութիւնը յետաձգվել է: Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցում միաձայն ընտրվել է այդ խորհրդակցութեան համար պատգամաւոր պ. Ալ. Քալանթար, իսկ հոգաբարձական պատգամաւորներ ընտրվել են պ. պ. Իսմ. Գրիգորեան և Գ. Շահնազարեան:

Ընտրութիւնների մասին հաղորդում են մեզ և այն, որ մի քանի եկեղեցիներում անկանոնութիւններ տեղի ունեցած լինելով, ընտրութիւնները բեկանելու համար բողոքներ պէտք է տրվեն: Այսպէս, օրինակ, Քամոյենց եկեղեցում յայտնվել է, որ ընտրեալ պ. Խաժակը 4 ձայն աւելի է ստացել, քան ներկայ եղողների թիւը, այսինքն ի մի գումարելով սպիտակ և սև քուէները, 4 գնդակ աւելի է յայտնվել տուփում, որ անկանոն է, որովհետև բոլոր ձայների թիւը թէ սև, թէ սպիտակ պէտք է հաւասար լինի քուէատուների թւին:

Կիրակի, ապրիլի 23-ին կայացած պատգամաւորների ընտրութեան հետևանքների մասին մեզ հաղորդում են հետևեալ մի քանի տեղեկութիւնները: Հաւլաբարու Կարմիր Աւետարանի եկեղեցում ընտրված են՝ պ. պ. Արշակ Ղոնդախսազեան և Արշակ Տէր-Խաչատրեան: Սուրբ Գէորգայ Կաթողիկէ եկեղեցում՝ պ. պ. Ամիրխանեան (երէցփոխ) և Ն. Թոփչեան: Նորաշէնու սբ. Աստուածածնայ եկեղեցում՝ պպ. Արշակ Բաբխուդարեան և Ստ. Մնացականեան:

Հայ-թուրքական խաղաղարար մասնաժողովին մասնակցելու համար Հաւլաբարու Կարմիր Աւետարանի ծխականներից ընտրված է պատգամաւոր ուսուցիչ պ. Իսահակ Յարութիւնեանցը:

Կուկիայի Նորաշէն Աստուածածնի եկեղեցում պատգամաւորներ ընտրվեցին ձայների բազմութեամբ Ն. Տէր Գրիգորեան և Գրիգոր Քահանայ Շահնազարեան, իսկ հայ-թուրքական խորհրդակցութեան համար ընտրվեց պատգամաւոր միաձայն Ա. Քալանթար:

## ՔԱՐԷ ՏՈՊՐԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՊՐԾԱԾ ԱՂԱՂԱԿՆԵՐ

—

«Քաւնիրորդ Դոր» թերթը մի շարք նամակներ է ստացել զանազան բանտերում տառապող քաղաքական «յանցաւորներից», որոնց ընթերցումը մարդու վրա վերին աստիճանի ճնշող ու ծանր տպաւորութիւն է թողնում: Թէև Ռուսաստանի համար այդ տառապանքները նորութիւն չեն, թէև Ռուսաստանի «քաղաքացիները» դեռ օրօրոցից ընտելացել ենք այդ բռնապետական ռեժիմի հնարած և քաղաքակրթված երկրների համար միանգամայն անպատուաբեր, «քաղաքական յանցաւոր» բառերին ու վաղուց անտի սովորել ենք այդ հասարակական հերոս զոհերի տանջանքների մասին լսել, բայց և այնպէս, ներկայ հանգամանքներում,—երբ մենք իբր թէ անց ենք կացրել բռնապետական ռեժիմը, անցեալի պատմութեանն ենք յանձնել նրան և արդէն որոշ քաղաքական ազատութիւններ ենք վայելում,—այդ քարէ տոպրակներում փակված անմեղ զոհերի տառապանքները մեր մէջ մի առանձին զայրոյթի զգացմունք են առաջացնում: Նամանաւանդ ծանր է տպաւորութիւնը, երբ զգում ես, որ այդ մարդիկ հալածվում ու տառապում են հէնց քեզ համար, քո և ընդհանուր ժողովրդի բարօրութեան ու ազատութեան համար և դու անկարող ես նրանց մի բանով օգնել, նրանց վիճակը թեթեւացնել:

Ուղարկված նամակներում այդ դժբաղդ զոհերը մի առ մի պատմում են, թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ են պահում իրանց քարէ տոպրակի նման մութ ու կեղտոտ բանտերում, թէ ինչպէս նրանց ծեծում են, թէ շատերը, չը կարողանալով տանել իրանց կրած տանջանքները, կամ հիւանդանում, մեռնում են, կամ խելագարվում են և կամ ուղղակի անձնասպանութեամբ են ազատվում: Նրանք պատմում են, թէ ինչպէս իրանց զուրկ են բողոքելու որ և է միջոցից, բացի այն, որ ստիպված են լինում խմբովին կերակուրից հրաժարվել և ամբողջ օրերով, նոյն իսկ շաբաթներով ոչինչ չուտել, որի հետևանքը, ի հարկէ, դարձեալ լինում է հիւանդութիւն կամ մահ: Եւ այլն, և այլն, մի շարք չը տեսնված սոսկումներ:

Այդ նամակներից մէկը վերջանում է մի շատ ազդեցիկ և միևնոյն ժամանակ յանդիմանական կոչով, որ մենք ամբողջապէս բերում ենք այստեղ.

«Իսկ դուք, դուք որ ազատ շրջում էք և Պետական Դումայի մասին ճառամարտութիւններ էք անում, տրդեօք երբէք մտածում էք մեր մասին: Մի՞թէ դուք խուլ և կոյր էք: Մի՞թէ դուք կարողանում էք հանգիստ կերպով առօրեայ գործերով զբաղվել, գիտենալով հանդերձ, որ ձեր կողքին հազարաւոր ձեր որդիներն ու եղբայրները տառապում են բանտերում, որ նրանք տանջվում են հէնց ձեր գաղափարների համար, ծարաւի են նորից կեանքի մէջ նետվելու և ոչ թէ ճրագի պէս քարէ տոպրակների մէջ հանգչելու: Մի՞թէ դուք չէք բարձրացնի, իբրև մի մարդ, ձեր հրամայողական ձայնը, ու չէք պահանջի խրոխտաբար, որ վերջապէս բացվեն այս բանտերի դռները: Մենք սպասում ենք դրան, մենք յոյս ունենք դրա մասին, մենք պահանջում ենք այդ»:

Այս բոլորը կարդալուց յետոյ, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատում է «Русск. Вѣд.» թերթը, մարդ ուղղակի ամօթ է զգում, որ ինքը դեռ ազատ է և ափսոսում է, որ ինքն էլ բանտում փակված չէ: Եթէ անզօր ենք մեր եղբայրներին մի բանով օգնել ու նրանց վիճակը թեթեւացնել, գոնէ այդպիսով նրանց տառապանքները բաժանած կը լինէինք:

Խ.-Ապառ

## ՑԱՒԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ

—

Մի ինչ որ թիւրիմացութեամբ ռուս մամուլը, ռուս հասարակութիւնը այն կարծիքին են, որ ամէն մի ինտելլիգենտ հայ—ազգային գործիչ է, որ Կովկասը լիքն է «հայ հայրենասէրներով», «գաղափարական գործիչներով», իսկ պ. Քալանթար «Մշակի» № 64 առաջնորդողում—ասում է: «Ո՞ւր էք դուք, հայ բժիշկներ, փնտրեցէք աղէտի ենթարկված տեղերը օգնելու տառապող ժողովրդին»:

Ո՜րպիսի դառն իրօնիա!

Այն ժամանակ, երբ մենք ազգասէրներին անուն ենք հանել աշխարհի առաջ, հայ մամուլը ստիպված է կոչ անել, ստիպված է յիշեցնել հայ ինտելլիգենտին նրա պարտաւորութիւնները դէպի մայր ժողովուրդը, դէպի հայրենիքը. ստիպված է հարուածել նրա անտարբերութիւնը, նրա անգաղափարականութիւնը:

Բայց ինչպէ՞ս է պատահել, որ մենք, որ այդքան եսամոլ ենք, մենք, որոնց համար այդքան խորթ է իդէալական, գաղափարական գործունէութիւնը, այն գործունէութիւնը, որը ամենաչնչին զոհաբերութիւն է պահանջում մեզանից յանուն ժողովրդի շահերի, այդպիսի մեծահռչակ հայրենասէրների անուն ենք վաստակել:

Դեռ մի քանի տարի սրանից առաջ մեր մի յօդուածում խօսել ենք այն մասին, թէ որքան մեծ տարբերութիւն կայ հայ կրթված երիտասարդութեան խօսքի և գործի մէջ. խօսքով ամէն մէկը մեծ հայրենասէր է, իդէալական է, բայց երբ կարիքը պահանջում է գործով ապացուցանել հայրենասիրութիւնը, գաղափարականութիւնը—բոլորը յետ են քաշվում:

Նոյնն է ասում այժմ իրականութիւնը:

Մեր ժողովրդական աղէտները երբէք առաջ չեն բերել ինտելլիգենտ դասակարգը ժողովրդի մէջ գործող, ժողովրդի ցաւերը անմիջապէս դարմանող, համեստ, բայց անձնազոհ գործիչներ, ինչպէս օրինակ ռուս երիտասարդութեան մէջ:

Որպիսի ոգևորութեամբ ռուս ինտելլիգենտ երիտասարդութիւնը—կին թէ տղամարդ—շտապում են անմիջապէս օգնութեան հասնել տառապող ժողովրդին, ամէն մի ժողովրդական աղէտի—սովի, խոլերայի, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդեհի ժամանակ:

Հրդեհի ժամանակ նրանք կրակն են նետվում ժողովրդի խղճուկ տնտեսութիւնը հէնց ազատելու համար. համաճարակների ժամանակ, առանց վարակվելուց վախենալու, անձնազոհութեամբ բժշկում, խնամում են անճար ժողովրդին:

Եւ շատերը զոհ են գնում իրանց գաղափարական գործունէութեան ժամանակ:

Նոյն ոգևորութեամբ այդ երիտասարդ կամաւորները գործում են գիւղերում և սովի ժամանակ, առանց ձգտելու հայրենասէրների անունն վաստակել:

Ի՞սկ մենք:

Ո՞ւր են նետվում այդպիսի գործիչներ:

Կար մի ժամանակ, երբ մենք էլ ունէինք «ժողովրդի բարեկամներ»—դրանք մեր ժողովրդական դպրոցների ժողովրդական ուսուցիչներն էին: Նրանք էին մօտ կանգնած մեր ժողովրդին, նրանք էին մխիթարում հայ գիւղացուն, բաժանում նրա հետ դառն օրերը, նրա ցաւերին կարեկից լինում. բայց փակվեցին դպրոցները և մեր գաղափարական գործիչնե-

---

# Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

## ՄԵՐ ՆԱԽԿԻՆ ԵՒ ԱՊԱԳԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ

—

### Դպրոցների նիւթական ապահովութեան խնդիր

Անցնենք հիմա այն զոհողութեան, որ հայ ժողովուրդը պէտք է անէ՝ ի նպաստ իր դպրոցական գործի և որի մասին մենք քիչ առաջ խօսեցինք: Եթէ աջողվի նոյն իսկ վանական կալուածներն և նրանց եկամուտները դուրս կորզել կղերի ճանկերից՝ այնուամենայնիւ այդ եկամուտները, որքան էլ նրանք աւելանան կալուածների արդիւնաւէտ շահագործութեամբ, բաւարար չեն կարող համարվել դպրոցների տնտեսական վիճակը էապէս յեղափոխելու համար: Բացի նրանցից պէտք է որոնել ու գտնել մի այլ միջոց, եկամուտի մի այլ աղբիւր, որ բղխէ անմիջապէս ժողովրդից և որ նոյնքան անսպառ լինի, որքան անսպառ օրեր կապրի ու կը շնչէ ինքը հայ ժողովուրդը:

Այդպիսի աղբիւր կարող է լինել ուսումնարանական տուրքը, որ կամովին պէտք է յանձն առնի վճարելու ժողովուրդը և որ պէտք է վճարէ անխտիր ամէն մի հայ մարդ, ով միայն որևիցէ հնարաւորութիւն, որքան ներէ ոյժ ու կարողութիւն ունի մասնակցելու այդ տուրքին: Մեզ շատ լաւ յայտնի է, որ հայ ժողովուրդը, մանաւանդ այժմ, առանց այն էլ ծանրաբեռնված է պետական և հասարակական բազմատեսակ հարկերով ու տուրքերով և որ սահմանել մի նոր տուրք՝ նշանակում է պահանջել ժողովրդից անել անհնարինը: Այդ մենք գիտենք, բայց գիտենք և այն, որ ժողովուրդը պէտք է անէ նոյն իսկ անհնարինը իր դպրոցներն և նրանց տնտեսական վիճակը բարեկարգելու համար: Կրկնում եմ, թող նա չը մոռանայ, որ իր ամբողջ ապագան, իր երջանկութիւնը կախված է դպրոցներից և որ իր այսօրվայ վճարած մի քանի ռուբլի ուսումնարանական տուրքը վաղը անհաշիւ ու անչափ քաղցր պտուղներ կը բերէ իր և իր յետնորդների համար:

Եթէ հաւանութիւն գտնի մի այսպիսի առաջարկ, ապա կարելի է մտածել, թէ ինչպէս անել, որ ուսումնարանական տուրքը վճարեն կարողաւորները, միայն թէ ինչ միջոց գործ դնել, որ այդ տուրքը ծանրութիւն չը պատճառէ վճարողներին և միևնոյն ժամանակ կազմէ տարեկան մի պատկառելի գումար՝ դպրոցական միւս մուտքերի շարքում: Մեզ թւում է, որ հայ ժողովուրդը՝ կատարելապէս գիտակից կրթական գործի անհրաժեշտութեան՝ չի հրաժարվի ուսումնարանական տուրք վճարելուց. չէ՞ որ դա նոյն ժողովուրդն է, որ տալիս է կամաւոր և ուրիշ տուրքեր, որոնց ուր գնալու և ինչպէս գործադրվելու մասին նա հեռաւոր գաղափար միայն ունի, այն ինչ ուսումնարանական տուրքը շօշափելի արդիւնք կը տայ հէնց առաջին տարվանից: Թող միայն նրանից ազատ լինի, ինչպէս ասացինք, քաղաքային և առանձնապէս գիւղական չքաւոր դասը, որից, ի հարկէ, ոչինչ էլ պահանջել չէ կարելի:

Ընդունենք, որ բոլոր հայերի թիւը Կովկասում և Ռուսաստանի այլ նահանգներում հաւասար է 1,200,000-ի և ենթադրենք, որ 12 հոգուց միայն մի հոգի կարող է վճարել տարեկան 2 ռուբլի ուսումնարանական տուրք—և ահա մենք կունենանք դպրոցական եկամուտի մի աղբիւր, որ տարեկան կը տայ 150-ից մինչև 200,000 ր.: Թող նա տայ սկզբում 100,000, մինչև անգամ 50,000 ռուբլի կամ աւելի պակաս,—դա մի առանձին նշանակութիւն չունի. ապագայում անպայման ուսումնարանական տուրքի արդիւնքը հետզհետէ կը շատանայ և կանցնի 200,000 ռուբլուց:

Անկասկած, քաղաքացի և գիւղացի հարուստները, ինչպէս նաև առևտրական միջին դասը հեշտութեամբ կը վճարեն տարեկան երկու ռուբլի, որպէս ուսումնարանական տուրք. մնում է մտածել քաղաքացի արհեստաւորների և այն գիւղացիների մասին, որոնք չեն կարող չքաւոր համարվել: Մեր կարծիքով, այս վերջիններին ծանրութիւն չը պատճառելու համար կարելի է, օրինակ, հարուստների վճարելիք տուրքի քանակը աւելացնել՝ հասցնելով տարեկան չորս ռուբլու, առևտրական միջին դասինը՝ երեք ռուբլու, իսկ արհեստաւորների ու գիւղական ոչ-հարուստ դասի վճարելիք բաժինը երկու ռուբլուց իջեցնել մի ռուբլու:

Յամենայն դէպս, այս հաշիւները մանրամասնութիւններ են և հեշտութեամբ կարող են կարգադրվել ապագայում: Գլխաւոր բանն այն է, որ ուսումնարանական տուրք սահմանելու միտքը ընդունելութիւն գտնի, արծարծվի, և հասարակութիւնը ընտելանայ մի այսպիսի տուրք վճարելու գաղափարին, որպէս անհրաժեշտութեան. այնուհետև դժուար չէ նպատակայարմար հրահանգներով կազմակերպել ու կանոնաւորել ամբողջ գործը՝ տուրք վճարողներին զանազան դիւրութիւններ ընծայել և ժամանակի պահանջի համեմատ՝ կարևոր փոփոխութիւններ մտցնել տուրքի սահմանման ու գործադրութեան կանոնների մէջ:

Ինձ կարող են առարկել սակայն, թէ գործի ամբողջ դժուարութիւնը հէնց այդ մտքին արծարծելու և հասարակութեան ընդունել տալու մէջ է, թէ ուսումնարանական տուրքը, որպէս կամաւոր և ոչ օրինականապէս ստիպողական վճարելիք, մի... անիրագործելի երազ, մի ուտօպիա է՝ ծնունդ վառ երևակայութեան: Դրան ես կը պատասխանեմ, որ ծոյլ, հեզգ, անգործունեայ ու մեռած մարդկանց համար ամէն ինչ երազ և ուտօպիա է, իսկ եռանդոտ, ձեռներէց և, որ գլխաւորն է, ժողովրդի շահերին անձնուէր մարդկանց շնորհիւ մարմնացել են շատ երազներ ու ուտօպիաներ և դարձել գեղեցիկ իրականութիւն:

Մենք համոզված ենք որ այս երազն ևս կիրականանայ, եթէ մենք չը ծալենք ձեռքերն և չը սպասենք, որ հրեշտակներ իջնեն երկնքից ու աշխատեն մեզ համար:

Պէտք է աշխատել, պէտք է եռանդ գործ դնել, քարոզել, բացատրել, ապա լուրջ փորձեր անել կազմակերպելու ուսումնարանական տուրքի գործը, իսկ այս ամենից յետոյ՝ մենք մի րոպէ անգամ չենք վարանում ասելու, որ նա կաջողվի, կաջողվի անպայման, որովհետև, մեր խորին համոզմամբ, հայ մարդը մասնաւորապէս այնքան հասունացած է այժմ, որ չի հրաժարվի տարեկան 1—2 ռուբլի վճարելուց իր դպրոցների օգտին:

Փորձեցէք, հաւատ ունեցէք ժողովրդի վրա և առաջուց մի յուսահատվէք. դա ամենից վատն ու ամենից վտանգաւորն է:

Եթէ մի օր մենք բաղդ կունենանք տեսնելու վանական կալուածների շահագործութիւնը ժողովրդական ներկայացուցիչների ձեռքում և ուսումնարանական տուրքը կանոնաւորապէս կազմակերպված, ապա իրաւունք կունենանք ասելու, թէ դպրոցների տնտեսական վիճակը բարւոքված է և ապագան ապահովված:

Եկամտի այդ երկու խոշոր աղբիւրները, որոնք կարճ ժամանակից յետոյ կարող են տալ տարեկան 4—5 հարիւր հազար ռուբլի եկամուտ, կատարելապէս բաւարար են դպրոցական կենտրոնական վարչութեան համար կազմելու ուսումնարանական մի պատկառելի բիւջէտ, որի մի մասը կը յատկացվի չքաւոր ուսումնարաններին, իբրև օժանդակութիւն, իսկ միւս մասով կը հիմնվի դպրոցական անձեռնմխելի ֆօնդ՝ ուսուցիչներին և դպրոցական ասպարէզում միւս բոլոր ծառայողներին կենսաթոշակ վճարելու համար: Անկասկած այդ բիւջէտից էլ կը հոգացվեն այն բոլոր ծախքերը, որոնք չեն վերաբերում այս կամ այն տեղական ուսումնարանին միայն, այլ ընդհանուր են և վերաբերում են ամէնքին: Օրինակ, կենտրոնական դպրոցական վարչութեան անդամների, թեմական և շրջանային տեսուչների, ինչպէս նաև նրանց դիւաններում ծառայողների ռոճիկները կը տրվեն այդ բիւջէտից:

Այսպէս ուրեմն մենք կունենանք դպրոցական երկու բիւջէտ—կենտրոնական և տեղական: Կենտրոնական բիւջէտը, ինչպէս ասացինք, կը կազմվի վանական կալուածների և ուսումնարանական տուրքի եկամուտներից, իսկ տեղական բիւջէտը, ինչպէս և առաջ, տեղական եկեղեցական-ժողովրդական գոյքերի,—քարվանսարաների, խանութների, բաղանիքների, այգիների, ուխտատեղիների, մոմավաճառութեան, ինչպէս նաև դպրոցական գումարների ու աշակերտական թոշակների արդիւնքներից: Տեղական բիւջէտի անբաւարար լինելու դէպքում միայն կենտրոնականը կը հասնի օգնութեան և կը լրացնէ նրա պակասորդը:

Գալով տեղական բիւջէտներին՝ մենք կասենք, որ նրանք պէտք է կազմվեն իւրաքանչիւր ուսումնարանի հաստատուն եկամուտներից և ոչ մի դէպքում հաշւի չը պէտք է առնվեն պատահական արդիւնքները, ինչպէս, օրինակ, ներկայացումներից, համերգներից, երեկոյթներից և ժողովարարութիւններից ստացվելիք գումարները: Դպրոցը, որպէս մշտական հիմնարկութիւն, չէ կարող յենվել պատահական արդիւնքների վրա. նրանք միանգամայն պէտք է դուրս գցվեն դպրոցական նախահաշիւներից, իսկ երբ կը ստացվեն այդպիսի չը նախատեսված արդիւնքներ, նրանք կարող են գործադրվել որպէս օժանդակ կամ յաւելեալ գումարներ դպրոցի այս կամ այն պատահական կարիքը հոգալու համար:

Հասարակական շրջաններում մեզ պատահել է շատ անգամ լսել մի կարծիք, թէ լաւ կը լինէր, եթէ մեր դպրոցներն ունենային մի ընդհանուր կենտրոնական դրամարկղ, որի մէջ գանձվէին ուսումնարանական բոլոր եկամուտներն և ապա բաժանվէին դպրոցներին՝ իւրաքանչիւրի կարիքի համեմատ: Այսպիսով իբր հաւասարութիւն կը մտցնվէր հարուստ և աղքատ դպրոցների մէջ և ամէնքն էլ տնտեսական ապահով վիճակ կունենային: Մենք այդ կարծիքը միանգամայն սխալ ենք համարում և հակառակ ենք նրա իրագործման դէմ այժմ, երբ սեփականութեան իրաւունքը այնքան խոր արմատներ ունի մեր ժողովրդի մէջ. ոչ մի հարուստ համայնք չի համաձայնի իր սեփական կալուածների եկամուտները տալ դպրոցական ընդհանուր դրամարկղին՝ նրանից իր եկամուտների կէսը կամ մի երրորդը ստանալու ակնկալութեամբ. բացի սրանից կան շատ աղքատ համայնքներ, որոնք սակայն ունեն դպրոցական հարուստ կալուածներ. տասնեակ տարիների ընթացքում այդ համայնքները, աւելի բուռն թափով զգալով կրթութեան պահանջը, կոպէկ առ կոպէկ տնտեսել, աշխատել ու չարչարվել են և տնտեսականապէս ապահովել իրանց դպրոցների վիճակը. կարո՞ղ են նրանք հեշտութեամբ հրաժարվել իրանց դպրոցական արդիւնքի նոյն իսկ մի մասից յօգուտ ուրիշ համայնքների: Դպրոցական ընդհանուր դրամարկղը այսպիսով ոչ միայն կը սահմանափակէ համայնքների լիազօր իրաւունքը կարգադրելու իրանց սեփական գործերն, ըստ իրանց հայեցողութեան, այլ և կը մեռցնէ նրանց մէջ մրցման զգացմունքը դպրոցական գործերի ասպարէզում: Բոլորովին այլ բան է, երբ կայ երկու դրամարկղ՝ ընդհանուր կամ կենտրոնական և տեղական: Ընդհանուր դրամարկղի մէջ կը մտնեն ընդհանուր մուտքերը, որոնց վրա ամէնքն իրաւունք ունեն և ոչ ոք առանձին-առանձին—այդպէս են վանական կալուածների և ուսումնարանական տուրքի եկամուտները, իսկ տեղական դրամարկղների մէջ՝ տեղական հասոյթները, որոնց վրա ոչ ոք իրաւունք բանեցնել չէ կարող, բացի այն համայնքից, որին նրանք պատկանում են: Կենտրոնական դրամարկղը կը կառավարէ և կենտրոնական բիւջէտը կը կազմէ ու կը գործադրէ, ժողովրդական պատգամաւորների հաւանութեամբ, դպրոցական կենտրոնական վարչութիւնը, իսկ տեղական դրամարկղները կը կառավարեն և տեղական բիւջէտները կը կազմեն ու կը գործադրեն, կենտրոնական վարչութեան հսկողութեամբ, տեղական հոգաբարձութիւնները: Ազատ ամէն մի ուսումնարանի համար առանձին-առանձին հոգալու անհրաժեշտութիւնից՝ ընդհանուր կամ կենտրոնական դրամարկղը իր նպաստներով կը թեթևացնէ տեղականների գործը, կը լրացնէ նրանց պակասութիւնները, կը ծածկէ բացերը: Միևնոյն ժամանակ կենտրոնական վարչութիւնը կը հիմնէ այնպիսի ուսումնարաններ, որոնց պահպանութիւնը վեր է որ և է քաղաքական կամ գիւղական համայնքի ոյժերից և որոնք սակայն կարևոր են ամբողջ գաւառի կամ նահանգի համար: Այդպէս, օրինակ, նա կը հիմնէ ուսուցչանոցներ, մասնագիտական, գիւղատնտեսական, տեխնիքական, արհեստաւորաց և այլ ուսումնարաններ, միացնելով տեղական համայնքների նիւթական ոյժերը և կարիքի դէպքում օժանդակութիւններ բաշխելով նրանց իր դրամարկղից: Բացի սրանից կենտրոնական վարչութիւնը կը հոգայ, որ ամէն մի հայ համայնք գոնէ ունենայ գրագիտութեան դպրոց: Ամէնքին յայտնի է, որ մեր երկրում կան այնպիսի յետ ընկած անկիւններ, խուլ, լեռների ու անտառների մէջ կորած-մոռացված գիւղեր, որոնց մասին ոչ ոք չէ մտածում: Նրանք իրանց չքաւորութեան պատճառով երազել անգամ չեն կարող ուսումնարաններ բանալու մասին առանց կողմնակի օգնութեան: Կենտրոնական վարչութեան առաջին պարտքը կը լինի անշուշտ որոնել ու գտնել այդ մոռացված անկիւնները, իր բիւջէտից յատկացրած որոշ հաստատուն հիմնել նրանց համար ուսումնարաններ, կառուցանել դպրոցական շէնքեր, մատակարարել դասական պիտոյքներ կամ դէթ ուղարկել շրջիկ ուսուցիչներ ու կազմակերպել շարժական դասարաններ:

Ահա այն միջոցները, որոնց, մեր կարծիքով, պէտք է դիմել դպրոցների տնտեսական վիճակը ապահովելու համար: Մի սակաւաթիւ ժողովուրդ, ինչպիսին մենք ենք, որին ոչ միայն ոչ ոք չէ օգնում, այլ որին, Աստուած գիտէ թէ ինչու, ամէնքը հալածում են, պէտք է աշխատի կենտրոնացնել իր ոյժերը, պէտք է ամէն ջանք գործ դնէ փոխադարձ աջակցութեամբ լրացնելու օտարի օգնութեան պակասութիւնը և դիմադրելու հալածանքներին: Իսկ փոխադարձ աջակցութեան լաւագոյն և ամենաարդիւնաւէտն այն է, որ մենք օգնենք իրար կանոնաւորելու մեր դպրոցները ապահովելու նրանց տնտեսական վիճակը: Առանց փոխադարձ օգնութեան մենք կորած ենք: Բաւական չէ, որ մի քաղաք, մի Թիֆլիս, մի Բագու, մի Ախալցխա կամ Ալէքսանդրապօլ, ունենայ նիւթականապէս ապահովված ուսումնարաններ, պէտք է նոյնը ունենան և այլ քաղաքները և առանձնապէս գիւղերը: Մեր առաջարկութիւնը՝ կազմել դպրոցական կենտրոնական բիւջէտներ, բացի տեղականներից, ոչ այլ ինչ է, եթէ ոչ փոխադարձ օգնութեան մի ձև, որ հնարաւորութիւն է տալիս չքաւոր հայ համայնքներին ևս ունենալ տնտեսականապէս բարեկարգ ուսումնարաններ: Անցեալի դառն փորձերը, երբ մի ուսումնարան թողնված էր իր առանձնակի բաղդին ու վիճակին, երբ նիւթական միջոցների պակասութեան դէպքում չը կար ոչ մի ելք, բացի անարգ մուրացկանութիւնից, թող մեզ խրատ լինեն: Աջակցենք իրար բարեկարգելու մեր դպրոցները և ապահովելու նրանց տնտեսական վիճակը. գոնէ այսպիսով մի օր ու թերևս ոչ հեռաւոր ապագայում, կը տեսնենք այն երջանկութեան, որ վայելում են քաղաքակիրթ երկրները և որ կոչվում է ձրի ու պարտադիր ուսում:

Ա. Մխիթարեան

րի այդ համեստ դասակարգը ասպարէզից դուրս եկաւ, նա ձուլվեց մեր եսամոլ, միայն նեղ անձնական ինտերեսներով ապրող նեւ-Թապալոյ ինտելլիգենցիայի հետ և այժմ մեր ժողովրդի տառապանքները թեթևացնող—ժողովրդի բարեկամներ չունենք։

Միթէ այդպէս է։

Չէ, մենք չենք ուզում հաւատալ, որ հայ ինտելլիգենցիան այդքան ընկել է, որ հայ երիտասարդութիւնը արձագանք չը տայ ժողովրդի ցաւերին և օգնութեան չը հասնի նրա տանջանքներին։

Սոֆիա Դանիէլբէգեան

## ՆՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

Երազը իրականութիւն է արդէն. Վիտտէ-Դուրնովոյի ամբողջ կաբինետը, երկար տատանումներից յետոյ, վերջապէս հրաժարական տուեց ու հեռացաւ ասպարէզից։ Նոր կաբինետը արդէն ամբողջովին կազմված է։

Կարդալով այս նոր կաբինետի կազմի մէջ մտնող անձնաւորութիւնների անունները, որոնք, շատ քիչ բացառութեամբ, հանրածանօթ են, մարդ մնում է շուարած ու հարցնում, թէ՝ ինչու եղաւ այս նոր դերակատարների փոփոխութիւնը և այն էլ Պետական Դումայի գումարման համարեա թէ նախընթաց օրը։ Ամեն մի մինիստրութիւն առհասարակ արտայայտողն է լինում մի որոշ քաղաքական ուղղութեան, մի յայտնի ռեժիմի։ Եւ երբ մինիստրութիւնը հրաժարվում է, այդ նշանակում է, որ նրա ուղղութիւնն ու ռեժիմը պարտութիւն է կրել, անպէտք և անօգտակար է եղել, հետևապէս պէտք է հեռանալ ու տեղի տալ այլ քաղաքական ուղղութեան տէր անձնաւորութիւնների, որոնք մի այլ, աւելի նպատակայարմար ռեժիմով կը կառավարեն երկիրը։ Արդ՝ կա՞յ արդեօք մի որևէ տարբերութիւն հրաժարվող մինիստրների ու նրանց տեղը անցնողների աշխարհահայեցողութեան, քաղաքական ուղղութեան և դաւանանքի միջև։ Մեր առջև դրված անունները մեզ այդ չեն ասում. Գորեմիկին, Ստոլիպին և Իգնատիեվ նոյն ռեժիմի և նոյն ուղղութեան մարդիկն են, ինչ էին Վիտտէ—Դուրնովօն։ Միակ տարբերութիւնը դուցէ նրանումն է, որ Վիտտէն, իբրև ճարպիկ ֆինանսիստ և արդիւնագործական ու առևտրական գործերին լաւ տեղեակ անձնաւորութիւն, մեծ վստահութիւն ունէր, թէ երբ ընտրութիւնների ժամանակ խոշոր բուրժուազիան աջողի յաղթութիւն տանել, ինքը կը կարողանայ նրան խաբել, իր կողմը գրաւել ու նրանց օգնութեամբ ամեն տեսակ խաղեր խաղալ, իսկ Գորեմիկինը գիւղացիական և հողային խնդիրներին լաւ տեղեակ անձնաւորութիւն է համարվում. և այժմ, երբ տեսան որ գիւղացիներն են յաղթութիւն տանողը և Պետական Դումայում մեծամասնութիւն կազմողը, մինոյն ժամանակ երբ իմացան, որ Դումայի հենց առաջին նիստերում հողային խնդիրների քննութիւն պէտք է կատարվի, շտապեցին Գորեմիկինին առաջ քաշել, որպէսզի սա կարողանայ գիւղացիներին խաբել ու նրանց գրաւել կառավարութեան կողմը։

Մենք միայն դրա մէջ ենք տեսնում հին և նոր մինիստրութիւնների միջև եղած տարբերութիւնը, այլապէս նրանք նոյն ռեժիմի և նոյն ուղղութեան անձնաւորութիւններ են, ուստի հազիւ թէ կարելի կը լինի մի որևէ փոփոխութիւն սպասել երկրի կառավարութեան ձևի ու եղանակների մէջ։ Այդպիսի փոփոխութիւն կարելի կը լինէր սպասել միմիայն այն ժամանակ, երբ նոր մինիստրութիւնը կազմվէր Պետական Դումայում մեծամասնութիւն կազմող կուսակցութեան անձնաւորութիւններից։ Այդ ժամանակ միայն երկիրը կը կարողանար վստահութեամբ վերաբերվել կառավարութեանը և հաւատալ, թէ նա իրապէս անկեղծ ու շիտակ է իր գործունէութեան մէջ։

Մինիստրների ներկայ փոփոխութիւնը ընդհակառակը աւելի մեծ անվստահութիւն կը ներշնչի ժողովրդին և ամենքն էլ իրաւամբ պէտք է հաւատան, որ Պետական Դումայի գումարվելով ոչ թէ բիւրոկրատների ու քաղաքացիական պատերազմը աւարտ պէտք է առնան, այլ ընդհակառակը՝ նրանք դեռ նոր պէտք է սկսվեն և աւելի խիստ կերպարանք պէտք է առնան։ Հարկաւոր էին նոր և աւելի թարմ ոյժեր նոյն աւերման գործը շարունակելու համար, հարկաւոր էին նոր և աւելի կայտառ դահիճներ, որոնց շտեմարանը փառք աստծու Ռուսաստանում անսպառ է։ Սակայն, հարցն էլ հենց նրանումն է, թէ արդեօք աւերման ու դահճային սիստէմը կարո՞ղ է ամեն տեղ և ամեն ժամանակ յաջողութիւն և տևողականութիւն ունենալ։ Շատ ու շատ ցաւալի է որ միապետական բիւրոկրատիան չափազանց կարճատես ու կարճամիտ է և միմիայն իր ոյժերին ու շտեմարանին է հաշւի առնում և երբեք չէ մտածում ու չէ կարողանում հասկանալ, որ ամեն բանից զրկված ու յեղափոխականացած ժողովուրդը շատ աւելի մեծ ոյժերի և մարտիկ-հերոսների անսպառ շտեմարաններ ունի, որոնց առաջ շատ աւելի զօրաւոր կառավարութիւններ են խորտակվել, քան Վիտտէ-Դուրնովօ-Գորեմիկին-Ստոլիպին-Իգնատիևների փտած ու նեխված կառավարութիւնները։

Ռ

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Պետական Դումայի համար Կարսի նահանգից պէտք է ընտրվի մի մարդ։ Ընտրողների ցուցակները արդէն պատրաստ են և հրաւիրաթերթերը ղրկված ամենքին։ Ընտրութիւնները տեղի կունենան Կարսի հաշտարար դատարանում, ամսիս 27-ին։

Ժողովուրդը շուարել մնացել է, չը գիտէ որին ընտրէ, ձայն տայ և ղրկէ Պետերբուրգ, Դումայում իր բռնադատված իրաւունքները պաշտպանելու համար։

Ռուսները ցանկանում են ռուս ղրկել, անպատճառ չինովնիկներից մէկին... խօսում էին դատախազի օգնական պ. Դաւիդովիչի մասին, որը երկու օր առաջ յանկարծ երկու աչքով կուրացաւ... մէկ էլ զինուորական բժիշկ Վօսկրեսենսկու մասին, որ շատ անյարմար է այդ պաշտօնին։ Խօսվում է վիպասան Սարգսեանի մասին, որ այստեղ է. ամենայն հաւանականութեամբ նա կընտրվի «выборщикъ», որոնց թիւը լինելու է 17 հոգի ամբողջ նահանգից և որոնք իրանց միջից պէտք է ընտրեն արժանաւորագոյնին Պետական Դումայի անդամ։ Յուսանք, որ արժանաւորագոյնը կը ընտրվի։

Այսօր գեներալ Մալաման կը ժամանէ Կարս, նահանգապետը գնաց ընդ առաջ։

Սեպուհ

—

Պետերբուրգի «Միութիւնների միութիւնը» վերակազմվում է և կոչում է իրան «ընդհանուր ընտրողական իրաւունքի Լիգա», համարելով իր, իբրև պրոֆեսիոնալ կազմակերպութեան, դերը քաղաքական նպատակների վերաբերմամբ վերջացած, և գտնելով, որ ներկայումս գոյութիւն ունեցող կուսակցութիւնները ունեն աւելի լաւ կազմակերպութիւն միատեսակ տարրերը համախմբելու համար։

—

Ապրիլի 22-ին վրաց ռամկավար կուսակցութեան, ֆեդերալիստների և արմատական կուսակցութեան ներկայացուցիչներից կազմված մի խորհրդակցութիւն է կայացել, որտեղ համաձայնութիւն է մշակվել բոլոր կուսակցութիւնների տաքտիքական գործողութիւնների վերաբերմամբ և ընդունվել է ընտրութիւնների ժամանակ գործելու ծրագիրը։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիրբենդ, ապրիլի 21-ին։ Նահատակվեց անգութ գազանների, մարդ-բռնիների ձեռքով Պետերբուրգի համալսարանի ուսանող Ուսպենսկին, որին աւազակները գերի էին վերցրել, և ազատելու համար հօրից պահանջել էին երկու օրվայ ժամանակամիջոցում 30 հազար ռուբլի։

Փոխանակ փողի, ինչպէս պէտք էր սպասել, ինժինէր Ուսպենսկին (հայրը) ուղարկեց ոստիկանապետին 50 միլիցիա-կօզակներով, որպէս զի փրկեն որդուն ու պատժեն հռչակված «Միշկիրը աւանի» յայտնի աւազակներին։

Բայց աւաղ. կօզակները երկու օր փնտռելուց յետոյ վերադարձան քաղաք առանց ոչինչի։ Որքան մեծ վիշտ պատճառեց բոլորին, երբ երեկոյեան, ապրիլի 18-ին, լուր տարածվեց, որ Ուսպենսկու որդու գնդակահարված դիակը գտել են «Գիւրզէնի չայ» կոչված գետի ափին, բայց և այնպէս, ոչ ոք չէր հաւատում, մինչև որ Դիւրի շրջանի գաւառապետը հեռագրով իմացրեց ծնողներին, որ որդու դիակը գտնված է։ Ապրիլի 10-ին այստեղից գնացել էին դիակը բերելու մի քանի ուսանողներ. երեկոյեան սայլով բերին դիակը, որին դիմաւորելու դուրս էր եկել ժողովրդի խուռն բազմութիւն, ռէալական ու քաղաքային դպրոցների աշակերտները և գիմնազիայի աշակերտուհիները. տեսարանը սրտաճմլիկ էր։

Միւս օրը ժամը երեքին անմեղ զոհին վերջին հրաժեշտ տալու եկել էր մեծ բազմութիւն, առանց կրօնի խտրութեան. բոլոր ուսումնարանների աշակերտ ու աշակերտուհիները։ Ուսպենսկու տնից մինչև եկեղեցին, փողոցը ծածկված էր կանաչ խոտով։ Դագաղը տանում էին ուսանողները, ծածկոցը աշակերտուհիները, իսկ դագաղի առաջից տանում էին պսակներ, որոնց թիւը հասնում էր 8-ի։ Մեռաւ, մետաղի համար, ուսանող Ուսպենսկին, մինչև վերջին շունչը յոյս ունենալով, որ հայրը չի խնայի նոյն իսկ իր ամբողջ հարստութիւնը, իր միակ, աչքի սև ու սպիտակ որդու համար։ Բայց բոլորը անօգուտ, մարդ գազանների միակ գնդակը վերջ դրեց երիտասարդ ուսանողի կեանքին...

Հանգիստ ոսկորներիդ, ազնիւ նահատակ...

Դարզիման

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

### IV գլուխ

Պետական Խորհրդի և Պետական Դումայի և նրանց գործունէութեան եղանակի մասին.

50) Պետական Խորհուրդը և Պետական Դուման գումարվում և արձակվում են իւրաքանչիւր տարի Կայսերական Մեծութեան ուկազով։

51) Պետական Խորհուրդը բաղկացած է բարձրագոյն հրամանով նշանակված անդամներից և ընտրված-անդամներից։ Պետական Խորհուրդը և Դուման վայելում են հաւասար իրաւունքներ օրէնսդրական գործերում։

54) Պետական Դուման կարող է արձակվել դեռ իր անդամների լիազօրութիւնների ժամանակամիջոցը չը լրացրած՝ Կայսերական Մեծութեան ուկազով։ Միևնոյն ուկազով էլ նշանակվում են նոր ընտրութիւններ Դումայի համար և նրա գումարվելու ժամանակը։

55) Պետական Խորհրդին և Պետական Դումային, իրանց հիմնարկութիւնների սահմանած կարգով, իրաւունք է տրվում առաջարկութիւն անել գոյութիւն ունեցող օրէնքները վերացնելու կամ փոփոխութեան ենթարկելու և նոր օրէնքներ հրատարակելու մասին, բացի Պետական հիմնական օրէնքներից, որոնց վերաքննելու նախաձեռնութիւնը պատկանում է միմիայն Կայսերական Մեծութեանը։

57) Պետական եկամուտի նախագիծը քննելու ժամանակ չի կարելի դուրս ձգել կամ փոփոխել այնպիսի մուտքեր և ծախքեր, որոնք մտցրված են եկամուտի ցուցակի նախագծի մէջ բուն օրէնքների, յայտնի չափի, եկամուտի, նոյնպէս և բարձրագոյն հրամանների հիման վրա, գերագոյն իշխանութեան կարգով սահմանված։

58) Կայսերական պալատի և նրա իրաւասութեան տակ դրված հաստատութիւնների համար միասին յատկացված գումարները, եթէ միայն չեն գերազանցում 1906 թւի պետական եկամուտի հաշուեցուցակում նշանակված գումարից, քննութեան չեն ենթարկվում։ Քննութեան չեն ենթարկվում նոյնպէս և յիշեալ կրեդիտների մէջ կատարված այնպիսի փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են Կայսերական տոհմի վերաբերեալ հաստատութիւնների որոշումները ի կատար ածելու համար, համաձայն նրա մէջ պատահած փոփոխութիւնների։

59) Պետական պարտքերի և պետութեան յանձն առած ուրիշ պարտաւորութիւնների համար նախասահմանված գումարները կըրճատումների չեն ենթարկվում։

63) Օրէնսդրական կանոնները քննութեան են առնվում Պետական Դումայում և նրա հաւանութիւնը ստանալուց յետոյ մտնում են Պետական Խորհուրդը։ Պետական Խորհրդի նախաձեռնութեամբ մտցրված օրէնսդրական կանոնները քննվում են Խորհրդի մէջ և նրա հաւանութիւնից յետոյ մտնում են Պետական Դուման։

64) Պետական Խորհրդի կամ Պետական Դումայի կողմից չընդունված օրէնքի նախագծերը համարվում են մերժվածներ։

65) Պետական Խորհուրդը կամ Պետական Դուման իրաւունք ունեն դիմել մինիստրներին կամ զանազան մասերի գլխաւոր կառավարիչներին հարցապնդում անելով այնպիսի գործողութիւնների առիթով, իրանց կողմից կամ իրանց ստորադրեալ անձանց կողմից կատարված, որոնք համարվում են ապօրինի։

## ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ

### V

Այժմ դառնանք ամուսնալուծական խնդիրներին, Ո՜հ, չարաստանջ խնդիրներ։ Այդ խնդրի մասին առիթներ շատ ենք ունեցել խօսելու. աւելորդ է կրկնել. այստեղ կարևոր ենք համարում միայն յիշել, որ այն, ինչ հայոց եկեղեցին սահմանել է ժողովով հայադաւանների ամուսնալուծական գործերի համար, բոլորովին տարբեր է նրանից, որ եկեղեցու մէջ իրաւունքներ ունեցող հոգևորականութիւնը գործադրել է անցեալում և գործադրում է այժմ։ Այո, դրանք տրամագծօրէն իրար հակառակ են, իրար հերքում են։ Մինչդեռ մէկը—ժողովով սահմանված կանոնը թոյլ է տալիս լուծել պսակը նոյն իսկ ամուլութեան դէպքում, նորը—կուսակրօնների սարքած ու ժողովով չը սահմանած սովորութիւնը, հակառակ կեանքի մէջ գործադրվող և գոյութիւն ունեցող սովորութեան, ոչ միայն այդ պատճառով չի լուծում ամուսնութիւնը, այլ նաև յաճախ ու հասարակ ամուսնութեան անլուծանելիութիւնը մի անյողդողդ դոգմա, մի անսասան կարգ է ընդունել։

Կուսակրօնները մտածել և մտածում են ամուսնութեան սրբութեան պահպանութեան վրա. նրանք այդ խնդրում ոստիկանական վերահսկողի անխախտելի ու տխուր դեր են առնում։ Բարեպաշտութեան մասին մտածող այդ կրօնաւորները այն երջանիկ մոլորութեան մէջ են, որ քանի հեշտ եղաւ ամուսնական կապի քանդելը, այնքան էլ բարքերը հեշտութեամբ կապականվեն. ընտանեկան սրբութիւնը կը վերանայ։ Նրանք կեանքի պահանջը չը գիտեն, կեանքը չեն ճանաչում, աչքերը չեն բաց անում իրականութեան առաջ. նրանք չեն տեսնում, որ կեանքն ինքը, հակառակ նոյն իսկ ամենախստագոյն և խելագար հալածանքներին՝ իր, կուսակրօն հոգևորականութեան կողմից, այո, նոյն այդ կեանքը լուծել և լուծում է այդ խնդիրները շատ հասարակ կերպով։ Իսկ այդ կեանքըն ասում է. եթէ մէկի կինը ամուլ—չբեր է, եթէ մէկի կինն անբարոյական է, անհաշտ—կռւարար է, եթէ անբուժելի հիւանդութիւն ունի, եթէ առաջին գիշերը կոյս չէ եղել, և այլն. դրա հակառակ, եթէ մէկի մարդը ամուսնական կենակցութեան անընդունակ է, եթէ կռւարար, արբեցող, վատ վարքի տէր է և այլն, և այլն, կինը թողնում է մարդուն և հեռանում, իսկ մարդն էլ կնոջ մեղաւոր եղած դէպքերում՝ իր կնոջն է արձակում։ Ահա կեանքն այս է ասում, այս լուծումներն է տալիս ու տուել. արդ, առողջ տրամաբանութիւնն ինչ է թելադրելու մեզ. չերթանք ընդ առաջ, արդէն գործադրվող, ու ապօրինի անուն ունեցող այդ պահանջներին։ Օրէնքները որտեղի՞ց պէտք է քաղենք, կեանքի պահանջներից, թէ՞ վարդապետական իմաստակութիւնից և ինչ որ կասկածելի սրբութիւնից։

Ինձ թւում էր, թէ ամուսնալուծական գործերի այժմեան շատութիւնը նոր ժամանակների հասկացողութիւն է, նոր հոսանքների հետևանք, սակայն անցեալ (XIX) դարի առաջին կէսի պաշտօնական գործերը ուսումնասիրելիս, յատկապէս այդ խնդրի համար, եկայ այն եզրակացութեան, որ դա շատ քիչ չափով է ուղիղ, որ հնումն էլ համեմատաբար շատ են եղել ամուսնալուծական խնդիր յարուցանողների թիւը։ Եւ դեռ ի նկատի պէտք է ունենալ, որ անցած այդ երջանիկ ժամանակներում կնաթող ու մարդաթող լինելն մի տրատաւոր բան էր, ու մի ապօրինի կին բերողը կամ մարդու գնացողը ենթարկվում էր խիստ հալածանքի, բանադրանքի, հոգևոր մխիթարութիւնից զրկվելու։ Հիմա պէտք է մտածել, որ եթէ այն ժամանակներումն էլ մարդիկ աչնուամենայնիւ համարձակվել են հակառակ հոգևոր իշխանութեան ցանկութեան և հրամանների ընթացք ունենալ, մինչև ո՞ր աստիճանի է հասած եղել բանը։ Կեանքի մէջ գոյութիւն ունեցող այդ սովորութիւնները միայն մի բան են ապացուցանում, — մարդկութեան ըմբոստացումը այդ տեսակ անմարդասէր ու բիրտ հրամաններով ու կարգադրութիւններով դժուար է յաղթահարել։ Իսկ պատմութիւնը մեզ սովորեցնում է, որ կեանքի ընթացքի դէմ գնացողները՝ ճխլվում են նոյն կեանքի ծանրութեան տակ։ Աշխարհականների կողմից մեր հոգևորականութեան դէմ ներկայ ըմբոստացումներն ու պահանջները, նրանց վարկաբեկվելը, իրաւազուրկ լինելու վտանգի առաջ կանգնած լինելը և այլն, նոյն պատմութեան կրկնողութիւնը, նոյն ընթացքը չեն ցոյց տալիս։ Կապրենք և կը տեսնենք։ Վերադառնանք նորից մեզ զբաղեցնող խնդիրներին և տեսնենք թէ, ներկայումս հայ հոգևոր իշխանութիւնն ինչով է ղեկավարվում ամուսնալուծական գործերում։

Այդ հարցին պատասխանելիս, ամենից առաջ կարող ենք ասել, որ նա—այդ իշխանութիւնն անծանօթ եկեղեցու անցեալին, անծանօթ ժողովներով ընդունած մեր եկեղեցու կանոնական կարգերին, միանգամայն հեռացել է նրա որոշումների շրջանից, ու նրանով չէ առաջնորդվում։ Սա մի մերկ ճշմարտութիւն է. եկեղեցու անունով, նրա կանոնների տակը թաքնվող այդ կուսակրօնները կեանքի մէջ, գործադրելու ժամանակ, մերժում են իրանց սուրբ ճանաչած ու քարոզած այդ կանոնները, ու ղեկավարվում կամայական, իրանց սարքած կարգերով։

Ռուս պետական օրէնքներով օտարադաւան եկեղեցիներն ամուսնական խնդիրներում ղեկավարվում են իրանց եկեղեցու սահմանած կանոնական կարգերով։ Բայց մեր հոգևոր իշխանութիւնը ղեկավարվում է ամուսնալուծութեան դէպքերում պրաւօսլաւ եկեղեցու համար (X հ. I մ. ա. գլ.) սահմանված կանոններով, ու այդ եկեղեցու վարչութեան մէջ գոյութիւն ունեցող պրակտիկայով։ Ցաւալին նրանումն է, որ օտար եկեղեցու կարգերից օգտվում են այն չափով, որքան որ հարկաւոր է խստութիւնը պահպանել և խտացնել։ Այսպէս օրինակ, հայ եկեղեցին ոչ մի արգելող կանոն չէ սահմանել, որով ամուսնալուծութիւնից յետոյ, ենթադրվէր կողմերից մէկին կրկին ամուսնանալու իրաւունքից զրկել. Էջմիածնում սինոդ հաստատվելուց յետոյ, նա իր ստորադիր վարչութիւնների հետ ղեկավարվում է նոյն ձևով. բայց երբ ռուս եկեղեցին ընդունեց, մօտ երեք տարի առաջ, մի կանոն, որով ապահարզանից յետոյ ոչ ոք չէ զրկվում կրկին ամուսնանալու իրաւունքից, ու մեղաւոր կողմին մինչև երկու տարի եկեղեցական ապաշխարանքից յետոյ թոյլ է տրվում կրկին ամուսնանալ։ Այո, երբ այնտեղ այդ, կէսը արդար կասենք մենք, թոյլատուութիւնն եղաւ, խստութեան նկատմամբ ռուս եկեղեցուն հետևող մեր հոգևոր վարչութիւնը չը տեսնող ձևացաւ, չուզեց օգտվել այդ նոր կարգից։ Այս դէպքում այդ կարգը օտար էր։

Ճշմարիտ է ապահարզանից յետոյ մեղաւոր կողմը կարող է դիմել ամենայն Հայոց Հայրապետի դիսպենսացիային—խնդիրը լուծելու, իր բարձր իշխանութեամբ կարգադրելու իրաւունքին, սակայն ինչքա՞ն այդ թոյլատուութեանը դիմել ինչու ողորմածութիւն հայցել, բացառութիւնների կարգը պահպանել, քանի որ հայ եկեղեցին այդ արգելքը չէ դրել, այդ արգելքը չէ ճանաչում։ Դեռ լաւ, որ ներկայ Հայրապետը մարդասիրաբար շատ էլ չէ մերժում դրական կերպով լուծել այդ խնդիրները։ Արդ, հոգևոր իշխանութիւնը կամ լիովին պէտք է հետևի պետական օրէնքների տրամադրութեանը և գործադրէ անպատճառ հայ եկեղեցու սահմանած կանոնները, և կամ թէ չէ, պրաւօսլաւ եկեղեցու մէջ ընդունված այդ նոր կարգին էլ հետևէ։

Այս առիթով դեռ շատ կարող էինք երկարել, սակայն կարճ կապենք։—Ամուսնալուծական խնդիրները կամ պէտք է կարգադրել Շահապիվանի (447 թ.) ազգային ժողովի կանոնների համաձայն, կամ թէ չէ, եթէ մի կանոնադիր ժողով պէտք է հրաւիրվի, նա այդ խնդիրը կարգադրելիս աչքի առաջ պէտք է ունենայ հետևեալ հիմունքները։

1) Ամուսնութիւնը լուծվում է, ա) եթէ կինն անբարոյական է, բ) եթէ վատ, ամբարիշտ վարքի տէր է ու կռւարար. գ) եթէ ամուսնական պարտաւորութիւններ կատարելու անընդունակ է, կամ եթէ խստու հրաժարվում է այդ պարտաւորութիւնները կատարելուց. դ) եթէ չարամտութեամբ թողել է ամուսնուն և հրաժարվում է նրա հետ ապրել, ե) եթէ չէ հետևում իր ամուսնուն, նրա նոր պաշտօնատեղին կամ աշխատութեան տեղը. զ) եթէ արգելքներ է առաջ բերում կամ միջոցներ է գործ դնում որդեծնութեան դէմ. է) եթէ անյայտ բացակայում է ամուսնուց մի ամբողջ տարի, և իր մասին ոչ մի տեղեկութիւն չէ տալիս, և այլն։

2) Ամուսնութիւնը լուծվում է, ա) եթէ մարդը մեղադրվում է առաջին կէտի մէջ յիշված ա—դ և զ—է յանցանքներում. բ) անզիջ արբեցող է և վատնում է իր կարողութիւնը. գ) եթէ վատ է վարվում իր կնոջ հետ, նրան ծեծում ու զգալի վիրաւորանքներ է հասցնում, դ) եթէ կալանաւորութեան է դիմում. ե) եթէ անփոյթ է թողնում իր կնոջը և դուրս է անում իր տանից, զ) եթէ գործել է այնպիսի յանցանքներ, որին հետևում է իրաւունքների զրկումն. է) եթէ զզուելի և տարափոխիկ հիւանդութիւն ունի (նոյն և կնոջ համար.) և այլն։

Բացի դրանից, ամուսնութիւնը լուծվելուց յետոյ, ոչ մի կողմը չը պէտք է զրկվի կրկին ամուսնանալու իրաւունքից։ Եկեղեցին իրաւունք չը պէտք է ունենայ որևէ մէկին զրկել քաղաքացիական իրաւունքներից։

Այդ բոլորից յետոյ, պսակը կարող է և պէտք է անվաւեր ճանաչվի. ա) եթէ կայացել է բռնի կերպով. բ) եթէ հրապարակաւ չեն յայտնել, թէ փոխադարձ համաձայնութեամբ են պսակվում. գ) եթէ մէկը խելագար է եղել կամ հոգեկան հիւանդութեան տէր. դ) եթէ անչափահաս է պսակվելու համար. ե) եթէ պսակը կատարվել է անթոյլատրելի աստիճանում։

Մնում է ասել, որ պսակի համար ոչ մի արգելք չը պէտք է առաջ բերվի օրերի նըկատմամբ. պսակն անարգել պէտք է կատարվի ամենայն օր։ Այդ առիթով կուսակրօնների թխած արգելքներն անմիտ են և բարբարոս։

Այսքանը բաւ համարելով, եկող անգամ մի քանի խօսքով կը դառնանք այն բանին, թէ ո՞ր ձևի պսակն է նախադաս, քաղաքացիականը, թէ եկեղեցականը, ու կանցնենք ծիսական խնդիրներին։

Ավար

## ՆԱՄԱԿ ՂՐԻՄԻՑ

Այն ընդհանուր, համամարդկային վշտի ու ցաւի ամիսներում, երբ մի վիթխարի պետութեան Մեծ-Յեղափոխութեան մրրկածուփ ալիքների տարուբերումները մի վայրկեանում անցեալի անդունդն էին գլորում անխախտ ու անընկճելի յայտարարված կոպիտ էգօյիզմի տիրապետութեան հիմունքները, երբ այդ յեղափոխականացած պետութեան մի այլ անկիւնում ռէակցիոն ու տգէտ մասսաներից յայտարարված էր սրի ու հրի թագաւորութիւնը, որը գալիս էր մեզ վերստին ներկայացնելու միջնադարեան վանդալիզմի ամբողջ ահն ու սարսափը,—ասում եմ, ընդհանուր մարդկութեան հոգին անսահման ցաւով համակող այդ համաշխարհային սուգի օրերում ինչ էինք անում կամ ինչ դիրք էինք բռնել շրջապատող իրականութեան նկատմամբ մենք՝ Ղրիմ թերակղզու մի քանի քաղաքներում համայնքներ կազմող հայերս։ Սա մի կարևոր հարց է, որին մենք ուզում ենք լսել կարելոյն կարճ և կտրուկ պատասխան տալ մեր կատարած մի շարք դիտողութիւններից յետոյ։

Հասկանալի կը լինի մեզ համար դրանց ժամանակակցութեան չափը ազատագրական շարժման մէջ, երբ վերոյիշեալ հայերին՝ դիֆֆերենցիացիայի օրէնքի համաձայն՝ նախ ենթարկենք դասակարգային բաժանման ըստ շահերի։ Մօտ մի տասնեակ հազար հոգի կազմող այդ գաղթականութեան ամենաստուար մասը կազմում են խոշոր ու մանր բուրժուաները. մինչդեռ պրօլետարիատի շահերին համապատասխանող դասակարգի թիւը միանգամայն չնչին տոկոս է կազմում։ Արդ, այդ չնչին տոկոսն էլ տարիների ընթացքում ապրելով իր կղզիացած կեանքով՝ կարի ասպարէզում նա յանկարծակի եկաւ և մտաւոր անպատրաստութեան շնորհիւ ոչ մի մասնակցութիւն չունեցաւ շարժման մէջ։ Նա չէր գիտակցում իր դասակարգային շահերը։ Աննշան բացառութիւնների մասին չէ, ի հարկէ, մեր խօսքը։

Խոշոր բուրժուաների շարքը կարելի է դասել մեր փոքրաթիւ կալուածատէրերին և կապիտալիստ վաճառականներին, իսկ մանր բուրժուաների—մանր վաճառականներին, որոնց թափն ու ճիգը կայանում է իրանց ձեռնարկութեան լայնացումը, ընդարձակումը։ Թէպէտ այս տեսակի մանրավաճառները ուղղակի և անուղղակի ճանապարհներով ճզմվում, տուժում են խոշոր կապիտալիստ վաճառականներից, սակայն, որովհետև այդ գիտակցութիւնը տակաւին շատ աղօտ է կամ իսպառ բացակայում է նրանց մէջ, այդ ճնշումն և նրանց տեսակէտից բնական օրէնք է։ Կասկած չը կայ, ի հարկէ, որ այդ կատեգօրիայի պատկանող մարդկանց ապագան անխուսափելի պրօլետարիզացիան է։

Սակայն անցնենք բուն խնդրին։

Եւ այդպէս՝ հայութեան ամենաստուար մասը այստեղ բաղկացած լինելով երրորդ դասակարգից, բնականաբար իրան հեռու պէտք է պահէր ընդհանուր յեղափոխական ալեկոծումներից՝ իր սրբազան շահերին որ և է վնաս չը տալու երկիւղով։ Թէպէտ վերջին հանգամանքը այնքան էլ նպաստող չէր (ներկայ ռեժիմը) բուրժուազիայի շահերի տեսակէտից, սակայն մեր յիշած մարդիկ տարիների ընթացքում այնքան խոր համոզմունքի էին հասել տիրող ռեժիմի անընկճելիութեան նկատմամբ, որ նրանց համոզմունքը հասել էր կատարեալ սարկամտութեան...

Հասարակական, ազգային, համամարդկային և ոչ մի իսկական թէկուզ իր ամենածայր բացառականութեամբ՝ նրանց չէր կարող շարժել և մղել դէպի կռիւ, դիմադրութիւն։ Անշուշտ սարկութիւնն էլ իր աստիճանն ու չափերը պէտք է ունենայ, սակայն ղրիմցու համար դա ըստ երևոյթին գոյութիւն չէ ունեցել. ուստի բռնակալական բոլոր ճնշումներն ու հնազանդութիւնները համարվել են միանգամայն բնական երևոյթներ։ Նախապաշարված ստրկամիտների յատկանիշն է սա։ Սակայն դրանք՝ ստրկամիտներ ամեն գոյնի ու որակի դառնապետի առջև՝ ստրուկ կամ հաւասար չեն իրանցից թոյլի առջև... Մանաւանդ այդպիսի դէրում աչքի է ընկնում փոքր ի շատէ խոշոր բուրժուան իր անսահման իշխանասիրութեամբ թէ ոչինչ չունեցող ռամիկի և թէ մանր բուրժուազիայի վերաբերմամբ։ Նա ճնշող է, շահագործող, ուժեղ է ու ազդեցիկ, մի խօսքով—նա այս է բառիս ամենաընդարձակ մտքով։

Սուրխաթեան

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ծերէլգա, ապրիլի 19-ին

Կարդալով ձեր պատուական «Մշակի» № 78-ի մէջ «Հայի աղէտը Սև ծովի ափում» յօդուածը, որի միջի զրպարտութիւնները և հայհոյանքները իմ և ամբողջ Թոփչեանեանների վերաբերմամբ այն աստիճանին վրդովեցրին ինձ, որ ներկայումս յետաձգում եմ լրագրութեան միջոցով պատասխանել պ. Զէյթունեանցին, այլ հրաւիրում եմ նրան կամ ընկերական դատի կամ կառավարչական դատարաններում հաստատելու իր զրպարտութիւնները թէ իմ և թէ ամբողջ Թոփչեանների վերաբերմամբ, որ պարոնը առանց ամաչելու շպրտել է ինչ որ գլուխ է եկել։ Այստեղ միայն այսքանը կասենք. ափսոս, ափսոս այն միջավայրին, որտեղ Զէյթունեանցը ուսում է առել, իսկ ներկայիս միանալով մի քանի խեղճերի հետ ժողովուրդը միմեանց դէմ է թշնամացնում և այդ բանը իր կարծիքով ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածել է,

Գէորգ Թոփչեանց

—

Գանձակ, ապրիլի 22-ին

Անցեալ մարտ ամսի վերջերին Թիֆլիսից տեղիս պօստ-հեռագրատան միջոցով, հեռագրական փոխադրութեամբ ստացել եմ երկու հարիւր վաթսուն վեց (266) ռուբլի, որ մինչև այժմ, հակառակ իմ դիմումներին այս ու այն անձերին չը յայտնվեց թէ ումից է այդ գումարը, ում պէտք է յանձնվի և կամ ինչ նպատակի պէտք է յատկացնել։

Որովհետև դրամը 266 ռ. փոխադրված է Թիֆլիսից, ուստի և դիմում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել այս երկտողը ի գիտութիւն և խնդրում եմ դրամ ուղարկողին յայտնել ինձ այդ գումարի գործադրութեան նպատակը։

Առաջնորդական փոխանորդ հայոց Գանձակի
Կորիւն վարդապետ

—

Թիֆլիս, ապրիլի 24-ին

Անմոռանալի ընկերոջս՝ Սեդրակ Մելիք-Ադամեանի յիշատակին ուղարկում եմ 25 ռուբլի յօգուտ Գանձակի աղէտեալների։

Բժշկապետ Սամուէլ Շահ-Պարոնեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս մենք լսել ենք Պետական Դումայի նիստը բանալու առիթով մտադրութիւն կայ ապրիլի 27-ից սկսած 3 օրով արձակել Թիֆլիսի բոլոր ուսումնարանների աշակերտներին և աշակերտուհիներին։

—

Ինչպէս լսում ենք Գանձակի գաւառում դարձեալ մորեխ է երևացել։ Նոյնը երևացել է և Շիրակի սարահարթում։ Ազգաբնակութեան համար այդ էլ մի նոր պատուհաս է։

—

Ինչպէս լսել է «Трудъ» թերթը, Բագւի քաղաքապետ է նշանակվում Սալեանի գնդի գնդապետ Վայլսեր։

—

Կովկասցիներից շատերը խնդրամատոյց են եղել Փոխարքային՝ իրանց պաշտօն տալու Բագւի քաղաքապետութեան մէջ։ Փոխարքայի դիւանատունը յայտնել է յիշեալ անձանց, որ կոմս Վորոնցով-Դաշկովի հրահանգների համաձայն, քաղաքապետութեան մէջ ծառայելու համար ընդունվում են միայն չեզոք ազգութիւններից, այսինքն ոչ հայեր և ոչ էլ մուսուլմաններ։ «Баку»։

—

Կովկասեան Փոխարքայի դիւանատունը հարցրել է Բագւի քաղաքագլխի պաշտօնակատարին գեկուցանելու քաղաքային դումային, որ գեներալ-լէյտենանտ Ֆադէևը այլ ևս չէ թողնում Բագու քաղաքի և նրա նահանգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնը։ «Баку»։

—

Մեզ հաղորդում են, որ կիրակի ապրիլի 23-ին, Բագւի հայ հասարակութիւնը հրաւիրված էր Մարդասիրական ընկերութեան դահլիճը կատարելու 4 պատգամաւորի ընտրութիւնը Բագւի գեներալ-նահանգապետի մօտ հաստատվելի հայ-թուրքական խորհրդակցութեան համար։ Սակայն ընտրութիւնը չը կայացաւ ներկայ լինող ծխականների մասնակցութեան իրաւունքը պարզված չը լինելու պատճառով։

—

Նաւթահանքերի վերանորոգութիւնը, «Рус. Госуд.» թերթի ասելով՝ Կովկասում ընթանում է շատ աջող, և ներկայումս նաւթի ստացումը հասնում է համարեա 70% իր նորմալ դրութեան։ Սովորաբար, երբ նաւթահանքերի կեանքը գտնվում էր իր նորմալ դրութեան մէջ, նաւթի ամսական մուտքը, միջին թւով, հասնում էր 50 միլիօն պուդի, իսկ այս տարի յունվար ամսին ստացվել է նաւթ 30 միլիօն պուդ, փետրվարին՝ 32 միլիօն պուդ և մարտին արդէն ստացվել է 38 միլիօն պուդ։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ դեռ հէնց այս տարի նաւթը իր նախկին նորմալ, սովորական դրութեանը կը հասնի։

—

Ինչպէս մեզ հաղորդում են, Թիֆլիս քաղաքում կազմակերպվում է առևտրական ֆիրմաների և կապիտալիստների միութիւն Կովկասում արդիւնաբերութիւնը զարգացնելու նպատակով։ Հիմնական դրամագլուխն է 800,000 ռ.։ Միութիւնը մտադիր է շրջանառութիւնը սահմանափակել մինչև 3,500,000 ռուբլի։ Այդ բանի մասին արդէն միջնորդել են առևտրական և արդիւնաբերական մինիստրութեան։

—

Գորից հաղորդում են Թիֆլիսի քաղաքային վարչութեան, որ Կուր գետը այդ քաղաքի մօտ բարձրացել է 1½ արշին։

—

«Кавказъ» թերթին հաղորդում են, որ Թիֆլիսի ոստիկանութեանը յաջողվել է անգլիահպատակ անհետ կորած Ստոկէի հետքը գտնել։ Պարզվել է, որ Ստոկէը փետրվարին եկել է Ղարայազի կայարանը, թողել է դահլիճում իր պայուսակը և, դուրս գալով պլատֆորմի վրա, անհետացել է։ Նրա մօտ եղել է մօտաւորապէս 9,000 ռուբլի փող։ Պարզվել է նոյնպէս, որ Ստոկէը սպանված է, իսկ թէ ով է սպանել, դեռ ևս յայտնի չէ։

—

«Баку» թերթը հաղորդում է, որ ապրիլի 30-ին Բագւում, Թաղիեւի թատրոնում կայանալու է երիտասարդ երգիչ Տ. Շահնազարեանի համերգը։

—

Լուր է պտտում, որ Եկատերինօսլավում 6 հոգուց բաղկացած անյայտ անձինք համարձակ են արձակել ատրճանակներից Եկատերինօսլավի գեներալ-նահանգապետ Ժելտօնովսկու վրա և տեղնուտեղը սպանել։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան նախահաշիւը այս տարի անցեալ տարվանից կրճատված է 13 միլիօնով պետական Խորհրդի կողմից։ Անցեալ տարի նշանակված էր նախահաշւում՝ 464 միլիօն։

—

Առևտրի և արդիւնաբերութեան բարձրագոյն դպրոցների կանոնադրութիւնները պէտք է մօտ օրերս ենթարկվեն վերաքննութեան, որի համար յատուկ խորհրդակցութիւն է լինելու առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան մէջ։

—

Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտում վերջին օրերս տեղեկութիւններ են ստացվել կենտրոնական նահանգների նահանգապետներից, որ գիւղերում տարածվում է հակակառավարչական ագիտացիան ծայրահեղ կուսակցութիւնների, դէպի որոնց գիւղացիները մեծ մասամբ համակրանքով են վերաբերվում և թշնամաբար նայում կառավարութեան վրա իր բիւրոկրատների համար։

—

Մայրաքաղաքի՝ մի քանի միջնակարգ դպրոցների ծնողական խորհուրդները խնդրամատոյց էին եղել, որպէս զի Պետական Դումայի գումարման նախօրեակից սկսած՝ ուսումնարանների պարապմունքները այլ ևս բոլորովին չը լինեն։ Ուսումնարանական շրջանի վարչութիւնը հոգաբարձուական խորհրդում քննելով այդ հարցը, անհիմն համարեց այդ խնդիրը յարգել և որոշեց ապրիլի 27-ի նախօրեակից ոչ թէ բոլորովին վերջացնել դասերը, այլ միջնակարգ դպրոցների աշակերտներին ազատել դասերից երեք օրով։ Միևնոյն արտօնութիւնը մտադրութիւն կայ վերապահել և ստորին դպրոցների աշակերտներին։ «Русск. Гос.»

—

Սամարայի նահանգապետը հեռագրած է [illegible] կոմս Վիտտէին, որ նա իրան պատասխանատու չէ համարում նահանգում անկարգութիւն ծագելու համար, եթէ Պետական Դուման ցրվելու լինի կամ արձակեն պատգամաւորների կամքի հակառակ։ «Б»։

—

Պետերբուրգի հետևակ զօրագնդերից մէկում 50 հոգուց բաղկացած զինուորների մի խումբ որոշել է գանձարանից իրանց հասնող ռոճիկատարաժինը յատկացնել յօգուտ անգործների։

—

«Volks Zeitung» թերթի Մօգիլևի թղթակիցը հաղորդում է ապրիլի 4-ին, որ հրէական աղօթատանը մօտ 300 հրէաներ հաւաքված հեռաքըքրութեամբ լսում էին սիօնիստական հռետորի դասախօսութիւնը։ Դասախօսութիւնը վերջացաւ ուշ և ամենքը սկսեցին ցրվել իրանց տները։ Յանկարծ դռնից ներս խուժեց ոստիկանութիւնը և զօրաց. —Կանգնիր, ապա թէ ոչ կը կրակենք! Շփոթված բազմութիւնը վաղեց դէպի պատուհանները և մի քանիսը սկսեցին երրորդ յարկից ներքև թռչել, բայց փողոցում կանգնած զինւորները հրացանի կոթերով անխնայ ջարդում էին, իսկ վերևից ոստիկանութիւնը կրակում էր ատրճանակներով և կտորում սրերով թափողներին։ Ամբողջ շինութիւնը և փողոցի սալայատակը ներկվել էր մարդկային արիւնով։ Իսկ «Die Zeit» թերթի թղթակիցը գրում է. «Տղամարդիկ կուրծքները դէմ արած պաշտպանում էին կանանց։ Աղօթատան նստարաններից նրանք պատնէշներ էին շինել և իրանց գլուխները սրերի հարուածներին ենթարկելով, կանանց իջեցնում էին պատուհաններից։ Մօտ 40 հոգի ծանր վիրաւորված են և նոյնքան էլ թեթև։ 300 հոգուց ոստիկանութիւնը կարողացաւ կալանաւորել միայն 60 հոգու։ Կալանաւորվածները ամենքն էլ սաստիկ ծեծված են և վիրաւորված։ Ժողովում մասնակցողներից ոչ ոք չէր զինված և խուզարկութեան ժամանակ նրանց տներում ոչինչ հակակառավարչական բան չէ գտնվել։ Բայց և այնպէս կալանաւորվածները դեռ բանտումն են պահվում։

«рудъ»

—

«Մշակի» № 86-ի մէջ բանասիրականի բաժնում «Մեր նախկին և ապագայ դպրոցները» վերնագրով յօդուածի մէջ, 4-րդ սիւնակում, «մեզ թւում է, որ բացի էջմիածնական հինգ գիւղերից, այգիներից և հողերից, որոնց արդիւնքը պէտք է յանձնել մի ժողովրդական ընտրական մարմնի և այլն» տողերի մէջ «պէտք է» բառից յետոյ հարկաւոր է աւելացնել՝ «թողնել այդ վանքի միաբանութեան անմիջական կարիքների համար, միւս բոլոր վանական կալուածների կառավարութեան գործը պէտք է», խօսքերը, որոնք բաց են թողնված։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոստիկանապետի հրամանը. առաջարկում եմ պոլիցմայստերներին, որ ոստիկաններից մէկն ու մէկի սպանելու կամ վիրաւորելու դէպքում, անյապաղ տեղեկութիւններ տան ինձ նրա ընտանեկան և նիւթական դրութեան վերաբերեալ, նաև այն, թէ ինչ ժամանակից յետէ ոստիկանը ծառայում է և ինչ հանգամանքներում է կատարվել սպանութիւնը կամ վիրաւորելը։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԱՆԳԼԻԱ

Բիլլ բանւորական դաշնակցութիւնների մասին։ Անգլիական պարլամենտը ընդունեց երկրորդ ընթերցանութեամբ կառավարութեան առաջարկած նոր բիլլը բանւորական դաշնակցութիւնների և գործադուլների մասին։ Վիճաբանութիւնները շատ հետաքրքիր և անակնկալ էին։ Կառավարութիւնը հրաժարվեց այն տեսակէտից, որ պաշտպանում էր առաջին ընթերցանութեան ժամանակ և նոր տեսակէտ ընդունեց, որ միանգամայն համապատասխան է բանւորների կարծիքի հետ և կայանում է նրանում, որ բանւորական կուսակցութիւնները ոչ մի դէպքում պարտաւոր չեն հատուցանել ձեռնարկողներին այն վնասները, որ նրանց պատճառում են դաշնակցութիւնների առանձին անդամները։ Այդ տեսնելով, բանւորական կուսակցութիւնը հրաժարվեց կառավարութեան դէմ օպպօզիցիա լինելուց և սկսեց աջակցել նրան։ Աւելի զարմանալի երևաց այն, որ օպպօզիցիայի լիդեր Բալֆուրը համակրանքով վերաբերվեց կառավարչական օրինագծին՝ նրա նոր ձևով։ Ի հարկէ, նա առիթից օգուտ քաղեց ծաղրել ազատամտական կառավարութեանը, որ այնքան արագ փոխեց ֆրոնտը արհեստանոցների քաղաքացիական պատասխանատուութեան հարցի մէջ։ «Ես առաջին անգամն եմ տեսնում—ասաց նա — այնպիսի կառավարութիւն, որ փախչում է կռուի դաշտից դեռ հրացանի ձայնը չը լսած»։

Կանանց ցոյցը անգլիական համայնքների պալատում։ Վերջին պոստով ստացված անգլիական թերթերում մանրամասն կերպով նկարագրված են կանանց ընտրողական իրաւունքի օգտին ստորին պալատում հանդիսականների մէջ եղած մի խումբ կանանց կողմից կատարված ցոյցի մասին։ Ինչպէս արդէն յայտնի է հեռագրից, այդ տեսարանը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ պալատը քննում էր բանւորական պարագլուխ Կէյր-Հարդիի առաջարկութիւնը կանանց պարլամենտական ընտրողական իրաւունք տալու մասին։ Այդ առաջարկութիւնը, որ պաշտպանում էր Իռլանդական պարագլուխ Ռեդմոնդ և նոյն իսկ ներքին գործերի մինիստրը Գլադստօն, յարուցվեց երեկոյեան ժամի 9½-ին։ Բայց որովհետև նիստը պէտք է վերջանար ժամի 11-ին, այդ պատճառով Բիլլի հակառակորդները վճռեցին «քրքրել» նրան, այսինքն հնարաւորութիւն չը տալ քուէարկութեան ենթարկելու մինչև ժ. 11-ը։ Այդ ապերախտ խնդիրը յանձն առաւ պատգամաւոր Էվանսը, որը մի երկար ճառով սկսեց կրկնել ամենքին արդէն յայտնի պատճառաբանութիւնները կանանց իրաւունքի դէմ։ Արդէն մօտենում էր ժամի 11-ը։ Յանկարծ գալերէայից, որը յատկացված էր կին հանդիսականների համար, սկսեցին ընդհատել ճառախօսին աղմուկ հանելով. «Ոչ, այդպէս չէ», և հեգնական բացականչութիւններով. «Լսեցէք, լսեցէք»։ Այն պատգամաւորները, որոնք Էվանսի ձանձրալի ճառի ժամանակ, հեռացել էին կուլուարները, նորից վերադարձան սրահը, հետաքրքրված այդ միջնադէպից, որ չեղած բան էր անգլիական պարլամենտի պատմութեան մէջ։ Էվանսը շարունակում էր խօսել նայելով դէպի կանանց գալերէան։ Երբ նա արտասանեց. «Ոչ մի տեղ համարեա կանայք չեն վայելում քաղաքացիական իրաւունքներ», գալերէայից լսվեցին աղմկալի ձայներ. «Իսկ Նոր-Զելանդիան, Աւստրալիան»։ Այդ միջոցին արդէն ամբողջ պալատի անդամների հայեացքները ուղղած էին դէպի կանանց կողմը։ Էվանսը շարունակեց իր ճառը, բայց գալերէայից նորից սկսեցին բղաւել. «Քուէարկել, քուէարկել», «և դուք լիբերալներ էք», «ձեզ չի աջողվի խեղդել Բիլլը», և այլն։ Էվանսը լռեց, և վիճաբանութիւնները ընդհատվեցին։ «Քուէարկելու» ձայները աւելի ու աւելի էին ուժեղ հնչում։ Միևնոյն ժամանակ գալերէայի վանդակների միջանցքից դուրս հանվեց սպիտակ պաստառ դրօշակ վրան սև տառերով մակագրված. «կանանց ձայնի իրաւունք տուէք»։ Հէնց այդ րօպէին էլ գալերէայի ներսում երևացին ոստիկանական դէմքեր. դրանք ոստիկաններ էին և համայնքի պալատի ծառայողները, որոնք սկսեցին դուրս տանել այնտեղից աղմկարարներին։ Բայց աղաղակները. «քուէարկեցէք»—, «քուէարկեցէք, դեռ ևս ժամանակ կայ» շարունակում էին լսվել։ Պատգամաւոր Ռեդմոնդը ոտքի կանգնեց և հարցրեց, վայելուչ բան է, արդեօք, ոստիկաններին ուղարկել տիկիններին հեռացնելու համար։ Բայց նրա միջամտութիւնը պատգամաւորների մեծամասնութեան կողմից թշնամաբար ընդունվեց։ Եւ լսվեցին ձայներ, «Ի հարկէ», «Ինչու համար ոչ»։ Էվանսը, օգուտ քաղելով պատահած միջադէպից իբրև ապացոյցներ կանանց իրաւունք տալու հակառակ, շարունակեց ճառել այդ ոգով և դեռ չէր վերջացրել, ժամի 11-ը լրացաւ։ Կէյր-Հարդիի առաջարկութիւնը այդպիսով «խեղդվեց»։

Այդ միջոցին վերևում, կանանց գալերէայում, տեղի ունեցաւ հետևեալը։ Երբ պալիկերի կարգադրութեամբ այնտեղ երևացին սպասաւորները ոստիկանների ուղեկցութեամբ, կանայք չուզեցին հեռանալ իրանց տեղերից։ Այն ժամանակ ոստիկանները թեւանցուկ արեցին նրանցից երկուսին, որի միջոցին նրանցից մէկը բացագանչեց. «Մենք 40 տարի է մաքառում ենք իրաւունք ստանալու համար, և, ինչպէս երևում է, կարող ենք նրանց ստանալ միայն այն ժամանակ, երբ կը կոտրենք մի քանի ապակիներ»։ Միւս կանայք ընդդիմութիւն ցոյց չը տուին։ Դուրս գալով գալերէայից, նրանք մտաբերեցին, որ այնտեղ մոռացմամբ թողել են իրանց գլխարկները և վերնազգեստները, և ուզում էին վերադառնալ վերցնելու, բայց կարգ պահպանողները, այդ բանը մանեւր կարծելով, նրանց չը թողին վերադառնալ և տարան գալերէայի նախասենեակը միայն։ Կարգապահութիւնը խանգարողները դուրս բերվեցին Վեստմինստերեան բակը, որտեղ ոստիկանական տեսուչը գրեց նրանցից մի քանիսի անունը։ Այդ գրվածները, ինչպէս պարզվեց, չամուսնացածներ էին (miss)։ Նրանց թւում ճանաչեցին մի քանի տիկինների, որոնք առաջ ներկայացել էին առաջին մինիստրին խնդրանաւոր լինելու իրաւունքներ շնորհելու մասին։ Անունները գրելուց յետոյ, կանայք ուզում էին նորից վերադառնալ գալերէա իրանց գլխարկների և վերնազգեստների համար, բայց հէնց այդ ժամանակ եկաւ ոստիկանը, բերելով իր հետ գլխարկների և վերարկուների կապոցը, որը յանձնեցին իրանց տէրերին։ Հեռացրած կանանց թւում կային շատերը, որոնք ոչ մի մասնակցութիւն չէին ունեցել ցոյցի մէջ։

«Р. В.»

Անգլօ-թիւրք վէճը։ Ստացված մասնաւոր տեղեկութիւնները, որ իբրև թէ թիւրքական ագենտները գրգռում են անգլիական, ֆրանսիական Սուդանի մուսուլմաններին, Տունիսում և Ալժիրում այժմ պաշտօնական զեկուցումներով հաստատվում են։

Այդ ագենտների մէջ նկատված են որ գերմանացիներ էլ կան։ Մուսուլմանները խրախուսվում են այն հաւատալիացութիւններով, որ վայելում են խալիֆի հզօր բարեկամի հովանաւորութիւնը։ Լուրեր են պտտում, որ ֆանատիկները պատրաստվում են շարժվելու և արդէն սկսել են։ Անգլիան և Ֆրանսիան օգնական զօրքեր են ուղարկում Հիւսիսային Աֆրիկայի գաղութների մասերում եղած իրանց զօրքերին։

Անգլօ-չինական դաշնագիրը։ Դիպլօմատները մեծ նշանակութիւն են տալիս անգլօ-չինական դաշնագրին։ Անգլիայի հրաժարվելը անգլօ-տիբեթական պայմանագրից և յանձնառու լինելը այսուհետև այլևս դիպլօմատիական յարաբերութիւններ չը սկսելու, ցոյց է տալիս, որ ներկայ լիբերալ կաբինէտը արդարև խզեց իր կապերը Կերզօնի յափշտակիչ ծրագիրների հետ։ Իսկ Չինաստանը դրա շնորհիւ և այդ վերջին դաշնագրով անսահման իշխանութիւն ստացաւ Տիբէթի վրա և տուեց Անգլիային առևտրական արտօնութիւններ։ Սակայն հետաքրքիր է իմանալ, կենթարկվե՞ն այդ բոլորին տիբեթցիները։ «Н. В.»

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 ապրիլի

ՓԱՐԻԶ, 21 ապրիլի։ Վէնսէնի անտառում գտնված է մի դիակ։ Ենթադրում են, որ այդ դին երէկ ձերբակալված երկու անիշխանականներից մէկինն է, որ հաւանօրէն ինքնասպանութեան արդիւնք է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Պետական Դումայի և Խորհրդի անդամները հրաւիրվում են ստանալ տոմսակներ, որոնցով նրանք իրաւունք են ստանում մտնել Դումա և Խորհուրդը, ինչպէս և ներկայանալու Թագաւոր Կայսեր Ձմեռային պալատում։ Իգնատեւի և Շվանէբախի մինիստր նշանակվելու լուրը ճշդվում է։ Լրագիրների ասելով, Կոկօվցեվը իբր թէ ֆինանսների մինիստրի պորտֆէլից հրաժարվել է։

ՄՈՍԿՎԱ, 22 ապրիլի։ Դատաստանական պալատը քննելով «Жало» երգիծաբանական շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ Վլասովի գործը, որ մեղադրվում է Բարձրագոյն իշխանութեան յանդուգն պարսաւելու մէջ,—դատապարտեց նրան բանտարկութեան։ Իսկ դեկտեմբերեան դէպքերի ժամանակ ապստամբութեան դրդիչ ուսանող Գոլիցինին—9 ամսով բանտարկութեան։ Պալատը արդար ճանաչեց Տրդատեանին և ուսանող Օծարեանին, որոնք մեղադրվում են յանցաւոր կուսակցութիւն կազմելու և գոյութիւն ունեցող պետական կարգը տապալելու նպատակով գաղտնի տպարան պահելու մէջ։

ԿԻԵՎ. Պետական Դումայի անդամ ընտրվածները բոլորն էլ սահմ.-ռամկավարներ են։

ՏՈՒԼԱ, 22 ապրիլի։ Կազմված է անգործների հոգատարութեան մի մասնաժողով։

ԼԱՆ, 22 ապրիլի։ Լսելով որ լեռնահանքային ընկերութիւնը վճռել է արձակել աշխատանքները չը վերսկսող բանւորներին, բազմաթիւ բանւորներ սկսում են աշխատանքներին կպչել. այնպէս որ ներկայումս աշխատում են 38515 հոգի. իսկ գործադուլների թիւը 15711-ի է հասնում։

ՓԱՐԻԶ, 22 ապրիլի։ Ոստիկանապետը պատուիրել է բանտարկել ամեն մի աշխատանքի ազատութիւնը խանգարողին։

ԼԻՕՆ, 22 ապրիլի։ Դրութիւնը լարւում. գործադուլների թիւը 2000-ի հասաւ։ Նրանք աշխատեցին աշխատանքից յետ կասեցնել գործադուլին մինչև այժմ չը յարողներին, որի պատճառով եղան փողոցային համաժխմբումներ։ Այդ բանից օգտվելով ոստիկանութիւնը շատ ձերբակալութիւններ արեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Բարձրագոյն ռեսկրիպտ—կոմս Վիտտէի ուղղած. «Կոմս Սերգէյ Իւլեւիչ։ Ձեր քաշած արտակարգ աշխատանքները քայքայեցին Ձեր առողջութիւնը, որից դրդված Դուք միջնորդեցիք ազատել Ձեզ մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնից։ Կոչելով Ձեզ այդ կարևոր պաշտօնին՝ ի կատար ածելու Իմ սահմանած որոշումները — Իմ հպատակներին օրէնսդրական գործերում մասնակցութեան հակվեցնելու ժամանակ,—Ես հաւատացած էի, որ Ձեր պետական փորձառու ընդունակութիւնները կը թեթևացնեն ընտրողական այն նոր որոշումների կեանքի մէջ գործադրելու գործը, որ սահմանվեցին — կայսրութեան ազգաբնակութեան շնորհած իրաւունքները իրականացնելու նպատակով։ Շնորհիւ Ձեր յամառ և լուսամիտ աշխատանքների — այդ հաստատութիւնները ներկայումս ժողովրդականացրված են և բազման պատրաստ—չը նայած ապստամբների պաշտօնեաների ընդդիմադրութեան, որոնց դէմ մղած կռվում ցոյց տւիք Ձեր յատուկ եռանդը և հաստատակամութիւնը և սրա հետ միաժամանակ ֆինանսական գործում ունեցած հմտութեամբ—Դուք աջակցեցիք պետական բիւջէի (եկամտի մի որ և է աղբիւր) ամրապնդման)—Ռուսաստանի կնքած փոխառութեան աջողութիւնը ապահովելու համար։ Զիջանելով Ձեր ամենախնդրական խնդրին, Ես սրտանց պահանջ եմ զգում արտայայտելու Ձեզ Իմ անկեղծ երախտագիտութիւնը—Ձեր՝ հայրենիքին մատուցած բազմաթիւ ծառայութիւնների համար, որոնց ի տրիտուր շնորհում եմ բարեպաշտ իշխան ս. Աղեքսանդր Նեւսկու ադամանդեայ շքանշանը։ Մնամ առ Ձեզ միշտ սիրալիր»—սեփական ձեռքով գրված է. «Եւ անկեղծ շնորհապարտ ՆԻԿՈԼԱՅ»։

—Դուրնօվօյի անունով տրված Բարձրագոյն ռեսկրիպտը. «Պետր Նիկոլաեւիչ։ Գնահատելով Ձեր աչքի ընկնող ընդունակութիւնները և գործի մէջ ցոյց տուած հմտութիւնը, Ես Ձեզ ներքին գործերի մինիստրութեան պաշտօնին կոչեցի մի այնպիսի ծանր ժամանակ, երբ հասարակական կարգի թշնամիները աշխատում էին—հայրենիքի բարւոքութեան Իմ ձեռնարկած բարենորոգումների իրականացման ընդդիմադրելու նպատակով—ժողովրդական կեանքի խաղաղ ընթացքը խանգարել։ Ձեր վճռական և անձնուրաց գործողութիւնները շատ բանում նպաստեցին ներքին խռովութիւնից յուզված մտքերի հանգստանալուն և ապահովեցին, որ ազգաբնակութիւնը անարգել կատարէ Պետական Դումայի և Խորհրդի անդամների առաջին ընտրութիւնները։ Վճռելով այդ գլխաւոր նպատակը, որ գրկել են կառավարչական իշխանութեան վրա, վերջին ժամանակի դէպքերը,—Դուք ամենահաստատակօրէն միջնորդութիւն յարուցիք՝ ազատելու Ձեզ ներքին գործերի մինիստրի պաշտօնից։ Յարգելով այդ խնդիրը Ես—Ձեր բեղմնաւոր գործունէութեան համար Իմ սրտանց շնորհակալութիւնս յայտնելով հանդերձ—շնորհում Ձեզ Իմ ստատս-սեկրետարի պաշտօնը. «ՆԻԿՈԼԱՅ»։ Երկու ռեսկրիպտներն էլ տրված են Ցարսկօէ Սելօում, ապրիլի 22-ին։ Մինիստրների Խորհրդի նախագահ է նշանակված Գորեմկինը։

ՓԱՐԻԶ, 22 ապ։ Վէնսէնի անտառի պայթումի առիթով կատարած քննութիւնը երեւան է հանել անիշխանական շատ կազմակերպութիւնների գոյութիւնը։ Դատաստանական քննիչը խուզարկել է Ստրիգայի բնակած տեղերը։ Երեկոյեան, քննիչի հրամանով ձերբակալված են ռուս ուսանող Բերնշտէյն 28 տարեկան, Ռօվնօ քաղաքացի, և Վինսյում ծնված 18 տարեկան Բերտա Ֆէլդը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Բարձրագոյն մի ուկազով հրամայված է—Պետական Խորհուրդը (?) ապրիլի 27-ին։

23 ապրիլի

ԿԻԵՎ 22 ապրիլի Նոր ընտրվածներն էլ բոլորը սահմ.-ռամկավարներ են։

ԲԵԼՕՍՏՕԿ, 22 ապրիլի։ Բոլոր գործարանատէրերը հեռացան քաղաքից, որը անաբեկված է։ Ռիխտէրի, Ռուդոլֆի, Կոմիսայի, Գինզբէրգի գործարանները փակ են։ Սպասվում է որ միւս գործարաններին էլ աշխատանքները կը դադարեցնեն։

ՉԻՏԱ, 22 ապրիլի։ Ոստիկանապետի ձերբակալութիւնը կապ ունի նոյեմբերեան չարաբաստիկ օրերում կազմված հրէական ինքնապաշտպանութեան գործի հետ։ Պաշտօնից հեռացված է նաև ժանդարմական օֆիցեր Բաբաքանովը։

ՑԱՐՍԿՕԷ-ՍԵԼՕ, 22 ապրիլի։ Լոյս տեսաւ «Царско-Сельская Рѣчь» լրագրի առաջին համարը. ուղղութիւնը ժողովրդական ազատութեան կուսակցութեան ուղղութիւնն է։

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ, 22 ապրիլի։ Տեղական հրէաները խմբերով գաղթում են Ամերիկա և Պաղեստին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Մենք լսել ենք, որ նոր գործ է բացվում Մակսիմ Գորկու դէմ։ Նրան մեղադրում են այն բանում, որ արտասահմանից յեղափոխական ագիտացիա է մղում, և այդ մտքով էլ «Рѣчь»-ում № 41-ում «Ողջունեցէք» վերնագրով մի յօդուած է տպել։ Պատասխանատուութեան են ենթարկվում խմբագիր Բուխանովսկին և հեղինակ Բերեշչաժը։—Դրականից կոմիտէի հրամանով զրաւած է Ռօզանովի բրօշիւրը։ Սա մեղադրվում է 129 յօդ. հիման վրա։

ԲՐԻԱՆՍԿ, 22 ապրիլի։ Առաւօտեան, երբ բանտարկեալները զբօսնում էին բանտի բակում, յանկարծ մի քանի զինված անձինք ներս ընկնելով բակը և վիրաւորելով բանտային կառավարչին—ազատեցին քաղաքական երկու յանցաւորներին և անհետ կորան։

ՍՏԱՒՐԱՊՕԼ, 22 ապրիլի։ Ի պատիւ Պետական Դումայի բացման, քաղաքային վարչութիւնը որոշել է—այդ օրը փակել տալ առևտրաարդիւնաբերական հաստատութիւնները, արձակել քաղաքային դպրոցների սաներին և փողոցներից մէկը կոչել ապրիլի 27-ի անունով։

23 ապրիլի

ԼՈՆԴՈՆ, 22 ապրիլի։ Տօկիօի «Դէյլի Տելեգրաֆ» լրագրի թղթակիցը հեռագրում է, որ մարտին կայացաւ ճապոնական փոխառութեան երկրորդ կէսի բաց թողնելը, որ կնքվել էր 1905 թ. նոյեմբեր ամսին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Սահմանադիր ռամկավարների կուսակցութեան համակայսրական համագումարը վերջացրեց այդ համագումարի ամենաէական հարցի—Դումայի առաջիկայ նստաշրջանում բռնելիք տակտիկայի քննութիւնը։ Երկօրեայ կենդանի վիճաբանութիւններին մասնակցում էին Դումայի աւելի քան 20 հնարաւոր պատգամաւորները և անդամները, որոնք միաձայն մասնացոյց արին ներկայիս քաղաքական դրութեան ծանրութեան և անյապաղ բարենորոգումների անհրաժեշտութեան վրա։ Այդ հարցի առիթով եղած ընդդիմախօսութիւնները մերթ խմբագրական բնաւորութիւն էին, մերթ սուր կերպարանք էին տալիս կոմիտէի առաջարկած թէզիսներին։ Համարեա միաձայն ընդունեց հետեւեալ եզրակցութիւնը 1) Դումայի առաջիկայ նստաշրջանում կուսակցութեան ունենալիք գործունէութեան առիթով համագումարը իրականացման է առաջադրում հետեւեալ հիմնական խնդիրները, որոնք մտնում են կուսակցութեան ծրագրի մէջ,—օրէնսդրական որոշումներով անձի, խղճի, խօսքի, ժողովների, քաղաքացիական ազատութեան անձեռնմխելիութիւն, ընդհանուր, հաւասար, ուղղակի ընտրողական իրաւունք—առանց սեռի խտրութեան ինչպէս ժողովրդական ներկայացուցչութեան մէջ, այնպէս և տեղական ինքնավարութեան մէջ, օրէնսդրական կարգով հողային հարցի լուծում, բանւորական հարցի վերաբերմամբ անյետաձգելի միջոցների ձեռք առնումն և ազգային արդարացի պահանջների բաւարարեցումն։ Կուսակցութիւնը ձգտելու է՝ հասնելու վերոյիշեալ նպատակներին—կռիւ չանելով կառավարութեան հետ թերևս ծագող խզման առաջ, բայց անպատճառ միջոցներ ձեռք առնելով, որ մեղքի ծանրութիւնը և ընդհարման—եթէ այդ տեղի ունենայ—պատասխանատուութիւնը ընկնի կառավարութեան վրա։ Տեղական խմբակների պատգամաւորների և պարլամենտական ֆրակցիայի միջև եղած լիակատար միութիւնը, որ հանդէս եկաւ ձայնատւութեան ժամանակ, ապահովում է կուսակցութեան տիրող քաղաքական նշանակութիւնը։—Պետական բանկը զեղչային—փոխատւութեան չափը ½%-ով իջեցրել է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Համաձայն խնդրագրի արձակվում է երկրագործութեան վարչութեան վերատեսուչ Շիպօվսկին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ի պատիւ Պետական Դումայի և Խորհրդի առաջին գումարման, բարձրագոյն ընդունելութիւնը Ձմեռային պալատում լինելու է շատ շքեղ։ Բարձրագոյն հրամայված է ներկայ լինել կայսերական տան անդամներին, Դումայի և Խորհրդի անդամներին, մինիստրներին, Սենատի և Սինօդի անդամներին, գեներալիտէտին, վարչութեան և քաղաքի ներկայացուցիչներին։—

Ցերեկվայ ժամի 1-ին, երբ գեներալ-նահանգապետ Դուբասովը իր ադիւտանտի հետ միասին բաց կառքով Ուսպէնսկի տաճարից վերադառնում էր, մի անյայտ մարդ՝ օֆիցերի զգեստ հագած՝ ռումբ նետեց գեներալ-նահանգապետի տան դռան մօտ, որ պայթեց, որը պայթեց զարհուրելի շառաչիւնով։ 500 քայլ հեռաւորութեամբ տների պատուհանների ապակիները ջարդ ու փշուր եղան։ Դուբասովը վիրաւորված է ոտքից, իսկ նրա ադիւտանտը սպանված է։ Սպանված են նոյնպէս 2 զինւոր. հասարակութիւնից մի քանիսները վիրաւորված են։ Կառքը ջարդվել է, իսկ ձիերը վիրաւորվել։ Լուրերին նայած ռմբաձիգն էլ սպանված է։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 23 ապրիլի։ Մի խումբ երիտասարդներ յարձակվելով հարկահանի վրա, խլեցին նրա մօտ եղած 9000 րուբլին։

24 ապրիլի

ՕԴԵՍՍԱ, 23 ապրիլի։ Սէվաստոպօլի բերդի կոմենդանտական բաժնի կառավարիչ կապիտան Օլդանգեր յանձնվում են զինւորական դատարանին, որ նա մեղադրվում է ծառայութեան անհոգութեամբ, որի հետևանքը եղել է «Պոտեմկին» զրահանաւում տեղի ունեցած ապստամբութեան գլխաւոր գործիչ ուսանող Ֆելդմանի փախուստը։

ՄՈՍԿՎԱ, 23 ապրիլի։ Սկզբունքով ընդունված է, որ այսուհետև զինված յարձակման վերաբերեալ գործերը յանձնվեն ընդհանուր դատարաններին, և ոչ զինւորականին։

ՍԷՆԴ-ԷՏԻԷՆ, 23 ապրիլի։ Ածխահանքերի տէրերը ապրիլի 24-ին վճռել են որ եթէ բանւորները նախկին պայմաններով աշխատանքները չեն վերսկսի, փակել հանքերը։

ԼԱՆ 23 ապրիլի։ Ներկայումս գործադուլների թիւը 11500-ի չէ բարձրանում։ Զօրքը հեռացված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Ստատս-սեկրետարի օգնական Տրեպօվը նշանակվում է սենատոր։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարի երեկոյեան նիստում ապրիլի 22-ին Միլիւկովի Պետական Դումայում բռնելիք տակտիկայի մասին կատարած զեկուցագրի համաձայն ընդունվել է հետևեալ եզրափակումը, Առաջին) Դումայում ունենալիք ամենալաւ ծրագիր՝ համագումարը համարում է անմիջապէս մտցնել Դումա քննելու համար արդէն յիշված համապատասխան օրինագծերը, ի կատար ածելու օրէնսդրական միջոցները։ Երկրորդ) բացի դրանից յանուն խղճային արդարութեան և հասարակական խաղաղ հանգստութեան, համագումարը անհրաժեշտ է գտնում հէնց սկզբում և եթ մտցնել մի նախագիծ՝ քաղաքական լիակատար ամնիստիայի, մահվան պատժի վերացման մասին, պարլամենտական քննութիւն կատարելու վարչութեան ներկայացուցիչների ապօրէնի գործողութիւնների դէմ, որ եղել են հոկտ. 17-ից յետոյ, հասարակական շարժման կռվում։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համակայսրական համագումարի նախագահ Դոլգորուկովը մինիստրների խորհրդի նախագահին ուղղել է հետևեալ հեռագիրը։ «Սահմ.-ռամկ. կուսակցութեան համառուսական համագումարը ապրիլի 21-ին կայացած նիստում միաձայն որոշեց՝ պահանջել վերադարձնել Արխանգելսկ նահանգը կառավարչական կարգով աքսորված պրոֆէսոր Գրեդեսկուլին, համարելով այդ միջոցը բողոքող խախտում մարդկային իրաւունքների»։

ՎԱՐՇԱՎԱ, 23 ապրիլի։ Քաղաքային ձեռնարկութիւնների բանւորների գործադուլը շարունակվում է։

ՓԱՐԻԶ, 23 ապրիլի։ Այսօրվայ հարցաքննութեան ժամանակ Սօկոլովը յայտնեց, որ ինքը Վարշավայի լեռնային ինստիտուտի ուսանող է, մասնակցել է Վարշավայում յեղափոխական շարժման, փախել է Պարիզ, ուր ծանօթացել է Ստրեգօի հետ պայթումի մօմենտին, չիմանալով որ Ստրիգան ռումբ է տանում։ Ապա աւելացրեց, որ ինքը անիշխանական չէ։ Քննութիւնը պարզել է. որ վերջին օրերս պատրաստվում էին մահափորձեր Ֆրանսիայում ապրող մի քանի յայտնի ռուսների կեանքի դէմ։

ԽԱՐԲԻՆ, 23 ապրիլի։ Մուկդէնում, չինացիները ճապօնացիների հետ բանկ են բանում։

ՎԱՐՇԱՎԱ, 23 ապրիլի։ Վարշավայի գաւառի ագրարային գործադուլները վերջացան. կալուածատէրերը ոչ մի պահանջի բաւարարութիւն չեն տուել, խոստանալով պայմանները բարելաւել ապագայում խաղաղ ճանապարհով։

ՍԱՐԱԿՎՕ, 23 ապրիլի։ Կառավարութեան և բանւորական կոմիտէի միջև բանակցութիւններ են տեղի ունենում։ Յոյս կայ թէ բիմացութիւնը աջող վերջաբան ունենայ։ Երկրում հանգստութիւն է տիրում։

ՄԱԼՏԱ, 23 ապրիլի։ Բեռնատար նաւը, որ սպասվում է ամեն րօպէ, կը լցվի զինւորներով Աղեքսանդրիա ուղարկելու համար։

ՄՈՍԿՎԱ, 23 ապրիլի։ Դուբասովի կեանքի դէմ մահափորձողը հագել էր լէյտենանտի զգեստ, և ոտքով էր գնում։ Պայթեցնելուց առաջ նա գնեց լրագիրներ. նրա գրպանում գտնվեց 200 րուբլի։ Պայթումի ոյժից նրա գանգը թռել է իրանից։

ՐԻԳԱ, 23 ապրիլի։ 40 զինված յեղափոխականներ յարձակվելով անցեալ գիշեր հեռագրական գծի բնակարանի վրա և կապելով պահապան զինւորին, գողացել են 31 վինտովկա և անյայտացել։

ԲՈՐԻՍՕԳԼԵԲՕՎՍԿ, 23 ապրիլի։ Քաղաքից դուրս արուարձանում այրվել են գիւղացիների 146 տները։

ԱՏԿԱՐՍԿ, 23 ապրիլի։ Հաղորդում են, որ անհայտ հրդեհներ են ծագել. Կրասլիէվկայում այրվել են 150, Զեմէզովկում՝ 52 տներ բոլոր իրերով և հացով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Բացվեց օրինական կարգի համառուսական երկրորդ համագումարը. նախագահ ընտրվեց իշխան Ն. Բ. Շչէրբատով։ Ներկայ են մօտ 200 անդամներ։

ՄԻՏԱՎԱ, 23 ապրիլի։ Միտաւայում և Րիգայում կազմվել են մի քանի կօմիտէներ, որոնք նպատակ են դրել մշտական կապ պահպանել Դումայի տեղական անդամների հետ, օգնել նրանց նիւթապէս, ստանալ նրանցից գործերի ընթացքի մասին տեղեկութիւններ։ Այսօր մեկնող պատգամաւորներին շրջանակ ներկայանում են ազգաբնակութեան զանազան խմբերի ներկայացուցիչները պէսպէս յանձնարարութիւններով։

ՄՈՍԿՎԱ, 23 ապրիլի։ Ենթադրում են, որ գեներալ-նահանգապետ Դուբասովի մարդասպանը այն ուսանողն է, որի բնակարանում վերջերս խորհրդաւոր պայթում է առաջացել։ Ցանցառուբին տեսել են մի քանի օր առաջ գեներալ-նահանգապետի տան դիմաց գտնվող «Դրեզդէն» հիւրանոցում, ուր նա գնալիս է եղել մի ծանօթի մօտ օտարազգի լրագիրներ կարդալու համար։ Դուբասովին այցելել են միտրոպօլիտը, նահանգապետը, քաղաքապետը և ուրիշ պաշտօնեաներ։

ԲԵՌԼԻՆ, 23 ապրիլի։ Ռուսահպատակներին աքսորելու առիթով—Բեռլինի առևտրական պալատի արած հարցապնդումին Պրուսիայի ներքին գործերի մինիստրը պատասխանել է, որ այդ աքսորելը տեղի է ունենում այն չափով, որով պահանջում են պետական շահերը։ Այժմ պատրաստ է իւրաքանչիւր դէպքը մանրազնին քննել այդ իմաստով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարի ցերեկվայ նիստը—Վինավերի նախագահութեամբ լսեց Կօրնիլովի, յանկոյս պարլամենտի կուսակցութեան ունենալիք գործունէութեան մասին արած զեկուցումը։ Միաձայն ընդունվեց զեկուցագրի հիմնական թէզիսները։ Ոլպէս գլխաւոր հիմունքներ—պարլամենտից դուրս կուսակցութեան բռնելիք գործունէութեան վերաբերմամբ—ընդունվեցին. ժողովրդին պատրաստել, որ նա գիտակցական մասնակցութիւն ունենայ քաղաքական և ինքնավարական ընտրութիւններին, որ հիմնված են լինելու ընդհանուր ընտրողական իրաւունքի վրա. աշխատել, որ ժողովրդական մասսաները իւրացնեն կադէտների ծրագիրը և նրա վրա հիմնված ընտրողական պլատֆորման, հաստատել մշտական և գործունեայ կապ Դումայում աշխատող ժողովրդական ներկայացուցիչների և երկրի ազգաբնակութեան միջև։ Ապա համագումարը առաջադրեց մի քանի միջոցներ, որոնցով կարելի է շուտափոյթ ի կատար ածել այդ որոշումները։ Երեկոյեան սկսվեց ագրարային հարցի քննութիւնը։

ԿԻԵՎ, 23 ապրիլի։ Մի փողոցում գտնվել է յեղափոխականների մի բնակարան գաղտնի տպարանով և անլեգալ շատ գրուածքներով. գտնված են նոյնպէս երկու ռումբ։ Ձերբակալված են երկու տղամարդ և մի կին։

ՍՄՕԼԵՆՍԿ, 23 ապրիլի։ Վերջին օրերս նահանգապետը արձակել է քաղաքական 210 բանտարկեալների։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
**ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏԵԱՆԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ե. Մ. ԶԻՏՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և ներվային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԽԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Պ. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Պ. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորներն ձրի։ Համաձայնութիւն (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
**Լեւոն Օհանջանեան**
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կոջեւսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոջեւսկի փողոցից № 2.
(ա. օ.) 133—300

ԲԺՇԿԱՊԵՏ
**Մ. Պ. ՋԱԽԱՐԲԵԿԵԱՆ**
Ներքին և ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 10—50

**ՁԻՆԻՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ**
գործեր ընդունում է ամեն տեղ պաշտպանելու հաւատարմատար Բ. Մելիք-Մելքոնեանց. Թիֆլիս, Վելիամինովսկի փողոց, № 12.
(ու. շ. ե.) 3—3

**ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ**
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արհեստանոցների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, № 13։
(հ. կ. ե.) 4—28

ԲԺՇԿԱՊԵՏ
**Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ**
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնովսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 17—20

**ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ**
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբութովսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 ա. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 75—100

**Ս. Գ. Շերմազանեան**
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօգիեզդ նոտար Մելքովի։ (ե.հ.շ.) 5—100

**ԿԱՆԴԻՏԵՐՍԿԻ**
**ԲՈՒԼՕՉՆԻ**
ԵՒ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Երկու բաժանմունքներով և նպաստաւոր տեղումը, մեկնելու պատճառով տրվում է քրէհով կամ ծախվում է. տեղեկանալ Тумановская № 27, տիկին Մելիքեանից։
(ե. կ.) 1—2

**ՀԱՅ ՕՐԻՈՐԴ**
լաւ ընտանիքից, ցանկանում է բօննայի պաշտօն, գիտէ լաւ հայերէն, ռուսերէն, ծանօթ է և ֆրանսերէնի հետ։ Կարող է ընկերակցել ճանապարհորդելու։
Հասցէ. Ростовъ На/Дону До востребованія Ж! К.
(ե. հ. շ.) 1—3

**ՄԻ ՀԱՅ ՏԻԿԻՆ**
կամենում է ընտանիքներում տնային վարժուհու պաշտօն ունենալ հայոց լեզուից։ Կարող է յանձն առնել և դաստիարակչուհու պաշտօն։ Համաձայն է գնալ ամարանոց։ Կարող է երեխաներին զբաղեցնել մանկական պարտէզի զբաղմունքներով։ Դիմել Тифлисъ уголъ Бебутовск. и Паскевича ул. Дѣтскій садъ С. В. Аргутинской.
(ե. շ.) 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Շահնազար գիւղի ճոթի և օղիի խանութ չորս սենեակից բաղկացած տալիս են վարձու տարի ժամանակով առևտուր անելու։ Ցանկացողները դիմեն Ст. Джалаль-Оглы въ сел. Шахназаръ։ Տանուտէր Բաղդասար Յակոբեանին։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ ապրիլի 27-ին ցերեկվայ ժամը 1-ին, վարչութեան շինութեան մէջ տեղի կունենայ աճուրդ՝ կապալով տալու քաղաքային Ջրանցքի համար 15,280 պուդ մաղութ և 10 պուդ պղինձ մատակարարելու գործը։ Մանրամասնութիւնները կարելի է տեսնել ամեն օր—բացի տօն օրերից—Ջրանցքի գործերի բաժնում, ցերեկվայ ժամի 10-ից մինչև 2-ը։

**„Գուտտենբերգ"**

| | | |
|---|---|---|
| Քանդած օջախ, Սունդուկեանի, կատակերգ. | » | 30 |
| Հողի Հայաստանի, գունաւոր, յարմարեցրված և կտավի վրա գործելու, արտասահմանի տիպ. | 5 | » |
| Հայրապետութիւն հայոց, գունաւոր | » | 50 |
| Բառգիրք, հայերէն լեզուի. | 4 | 60 |
| Ռուսերէն հայերէն բառարան Դաղբաշեանի (9 հատոր, լոյս է տեսել 8 հատոր) | 8 | » |
| Ռ. Պատկանեանի մեծադիր լուսանկ. | 1 | » |
| Պատկերներ, հատոր ա., Ջաւախեցու. | » | 60 |
| Փուչ զաւակ, դրամա 5 գործ, Գ. Ղարաջեանի | » | 50 |
| Մահտեսի Սարգիս (գիւղական կեանքից վէպիկ) Գ. Զուբարի | » | 50 |
| Ջալալէդդին, Րաֆֆիի, հեղինակի պատկերով | » | 60 |
| Խենթը և Ջալալէդդին (մի գրքով) | 2 | » |
| Րաֆֆի, | 2 | » |
| Խաչագողի յիշատակարանը, Րաֆֆիի | 5 | » |
| Կայծեր, Րաֆֆիի երկու հատոր | 3 | 50 |
| Դաւիթ-բէգ, Րաֆֆի | 3 | 50 |
| Սամուէլ, Րաֆֆիի | | |

Դիմել՝ Тифлисъ книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустяну.
№ 4. 2—2

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15